ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան 2019

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

ԱՐՏԱՀԵՐԹ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԵՐԵՎԱՆ 2019

Զեկույցը պատրաստվել է Հայաստանում Բուլղարիայի Հանրապետության դեսպանության աջակցությամբ իրականացվող «Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարողությունների ամրապնդում» ծրագրի շրջանակներում:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն Հայաստանում Բուլղարիայի դեսպանության տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 3

ԳԼՈՒԽ 1. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ 5

1. Հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենսդրությունն ու օրենսդրական նախաձեռնությունները 5
2. Հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանությանն առնչվող միջազգային փորձը 30

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ 34

1. Հանրային ծառայությունների ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը 34
2. Հանրային ծառայությունների ոլորտում արձանագրված խնդիրները 36

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակահատվածում սպառողների իրավունքների պաշտպանությունը շարունակում է հասարակական հարաբերությունների կարևորագույն խնդիրներից մեկը հանդիսանալ, ինչի հետևանքով մշտապես գտնվում է միջազգային հանրության և պետությունների ուշադրության կենտրոնում:

Շուկայական տնտեսության պայմաններում գրեթե յուրաքանչյուր քաղաքացի, հանդես գալով որպես ապրանքների, աշխատանքների և ծառայությունների սպառող, իր իրավունքները պաշտպանելու, իսկ դրանց խախտման դեպքում՝ այդպիսիք վերականգնելու անհրաժեշտություն ունի:

Պետությունը, իր հերթին, կոչված է համապատասխան իրավական ակտով առավելագույն հստակ կանոնակարգելու ոլորտը, որի վերջնական նպատակը սպառողների իրավունքների խախտումները կանխելն ու դրանց վնասակար հետևանքները վերացնելն է:

Այդ նպատակով ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են իրավական բազմաթիվ ակտեր, որոնք կոչված են երաշխավորելու սպառողների պաշտպանվածությունը, մշակվել են մեխանիզմներ սպառողների խախտված իրավունքները վերականգնելու համար:

Հայաստանում սպառողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ նկատվող դրական տեղաշարժերը պայմանավորված են ինչպես հասարակական կազմակերպությունների, այնպես էլ իրավասու մարմինների ակտիվությամբ: Հասարկությունը ևս սկսել է անտարբեր չմնալ, ձգտում է պաշտպանել իր իրավունքներն ու շահերը:

Այնուամենայնիվ, փորձագիտական կարծիքների համաձայն, Հայաստանում սպառողների իրավունքները ներկայում էլ շարունակվում են ստորադասվել տնտեսվարողների իրավունքներին, որին նպաստում է սպառողների շրջանում համապատասխան իրավագիտակցության բացակայությունը: Մինչ օրս սպառողները հաճախ բախվում են ցածրորակ ծառայությունների և ոչ պատշաճ սպասարկումների հետ, ինչը վկայում է, որ սպառողների իրավունքների պաշտպանության ոլորտը մշտապես կատարելագործման կարիք ունի: Փոփոխություններն առաջնահերթ պետք է արտացոլվեն օրենսդրական դաշտում, սակայն ոլորտը կարգավորելու համար անհրաժեշտ է ոչ միայն օրենքի կիրարկում, այլև պետություն-բիզնես-սպառող համագործակցություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31.1-րդ հոդվածով հռչակվում է, որ պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է, որ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց

շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածը սահմանում է, որ Պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ նույն օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

Սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ Պաշտպանը բողոքի առկայության դեպքում կամ սեփական նախաձեռնությամբ քննարկում է՝

1) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների պատվիրակած լիազորություններն իրականացնող կազմակերպությունների կողմից Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների խախտումները.

2) հանրային ծառայության ոլորտում գործող կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտման վերաբերյալ հարցերը, եթե տեղեկություն կա մարդու իրավունքների կամ ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի հանրային նշանակություն կամ կապված է այնպիսի անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք չեն կարող ինքնուրույն օգտագործել իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության իրավական միջոցները:

Մարդու իրավունքների պաշտպանի սույն արտահերթ զեկույցը կազմելու անհրաժեշտությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտին վերաբերող բնագավառներում սպառողների գրավոր և բանավոր բողոքներով:

Սպառողների իրավունքների պաշտպանության և շահերի հավասարակշռման ապահովմանը նվիրված սույն զեկույցի նպատակն ու խնդիրն է բացահայտել հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում գործող միջազգային-իրավական և ներպետական-իրավական համապատասխան փաստաթղթերում (իրավակարգավորումներում), նախագծերում, դրանց կիրառման ընթացքում առկա՝ սպառողների իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման ապահովմանը վերաբերող անկատարությունները, հակասական լուծումները, թերություններն ու բացթողումները, ինչպես նաև ներկայացնել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ, որոնք միտված են լինելու իրական երաշխիքներ ստեղծելու սպառողների իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման լիարժեք ապահովման համար:

ԳԼՈՒԽ 1. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԸ

1. Հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանությանն առնչվող ՀՀ օրենսդրությունն ու օրենսդրական նախաձեռնությունները

Հանրային ծառայությունների ոլորտում ծագող հարաբերությունները կարգավորվում են՝

- Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ,
- Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1998 թվականի մայիսի 5-ին),
- Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2002 թվականի հունիսի 4-ին),
- «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՀ օրենքով,
- «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» 2001 թվականի հունիսի 26-ի ՀՀ օրենքով,
- «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» 2003 թվականի դեկտեմբերի 25-ի ՀՀ օրենքով,
- «Փոստային կապի մասին» 2004 թվականի դեկտեմբերի 14-ի ՀՀ օրենքով,
- «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՀ օրենքով,
- «Երկաթուղային տրանսպորտի մասին» 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՀՀ օրենքով,
- «Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» 2007 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՀ օրենքով,
- Այլ իրավական ակտերով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31.1-րդ հոդվածով ամրագրված է, որ պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, իրականացնում օրենքով նախատեսված միջոցառումներ՝ ապրանքների, ծառայությունների և աշխատանքների որակի վերահսկողության ուղղությամբ:

«Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով կարգավորում է սպառողների և արտադրողների (կատարողների, վաճառողների) միջև ապրանքների վաճառքի (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) ժամանակ ծագող հարաբերությունները, սահմանում է սպառողների կողմից պատշաճ որակի և սպառողների կյանքի ու առողջության համար անվտանգ ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ձեռքբերման, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) և դրանք արտադրողների (կատարողների, վաճառողների) մասին տեղեկատվության ստացման, սպառողների շահերի պետական և հասարակական

պաշտպանության իրավունքները, ինչպես նաև սահմանում է այդ իրավունքների իրականացման մեխանիզմը:

Նույն օրենքի 1-ին հոդվածում պարզաբանված են հետևյալ եզրույթները՝

Սպառող՝ բացառապես անձնական, ընտանեկան, տնային կամ այլ օգտագործման համար նախատեսված, ձեռնարկատիրական գործունեության հետ չկապված, ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) պատվիրման կամ ձեռքբերման մտադրություն ունեցող քաղաքացի.

- սպառողների անորոշ շրջանակ՝ արտադրանքի (աշխատանքի, ծառայության) հնարավոր սպառողներ,
- արտադրող՝ իրացման համար ապրանքներ արտադրող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,
- կատարող՝ սպառողների համար պայմանագրով աշխատանք կատարող կամ ծառայություն մատուցող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,
- վաճառող՝ առուվաճառքի պայմանագրով սպառողներին ապրանք իրացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր,
- ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերություն՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) անհամապատասխանությունը նորմատիվ փաստաթղթերին, պայմանագրի պայմաններին կամ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին սովորաբար ներկայացվող պահանջներին,
- ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի էական խախտում՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակին առաջադրվող պահանջների էական խախտումներ (չվերացվող, ինչպես նաև այնպիսի խախտումներ, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են գալիս դրանք վերացնելուց հետո և նման բնույթի այլ խախտումներ), որոնց դեպքում սպառողն իրավունք ունի իր ընտրությամբ հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի (աշխատանքի, ծառայության) համար վճարված գումարը կամ պահանջել ոչ պատշաճ որակի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) փոխարինելու պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով (աշխատանքով, ծառայությամբ):

Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված է սպառողների իրազեկման իրավունքը, ինչն ապահովվում է կազմակերպամեթոդական և ընդհանուր տեխնիկական ու նորմատիվ փաստաթղթերում և հանրակրթական ու մասնագիտական ծրագրերում համապատասխան պահանջներ ընդգրկելով, ինչպես նաև սպառողների իրավունքների և այդ իրավունքների պաշտպանության անհրաժեշտ գործողությունների մասին տեղեկատվական համակարգերի կազմակերպման միջոցով:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վաճառողը (կատարողը) պարտավոր է սպառողին հանձնել ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն), որի որակը համապատասխանում է պայմանագրին, պայմանագրում ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի վերաբերյալ պայմանների բացակայության դեպքում, վաճառողը (կատարողը) պարտավոր է սպառողին հանձնել այնպիսի ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն), որը պիտանի է այն նպատակներին, որոնց համար նման

ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) սովորաբար օգտագործվում է: Եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) որակի նկատմամբ նորմատիվ փաստաթղթերով սահմանված են պարտադիր պահանջներ, ապա վաճառողը (կատարողը) պարտավոր է սպառողին հանձնել այդ պարտադիր պահանջներին համապատասխանող ապրանք (կատարել աշխատանք, մատուցել ծառայություն):

Օրենքի 8-րդ հոդվածով նախատեսվում է, որ սպառողն իրավունք ունի պահանջել, որպեսզի ապրանքը (աշխատանքը, ծառայությունը) օգտագործման, պահման, փոխադրման և օգտահանման սովորական պայմաններում անվտանգ լինի իր կյանքի, առողջության և գույքի համար: Եթե ապրանքի (աշխատանքի, ծառայության) անվտանգ օգտագործման, նրա պահման, փոխադրման, օգտահանման համար անհրաժեշտ է պահպանել հատուկ կանոններ, ապա արտադրողը (կատարողը) պարտավոր է դրանք նշել ապրանքի (աշխատանքի, ծառայության) պատկանելիք փաստաթղթերում, պիտակի վրա՝ մականշվածքով կամ այլ եղանակով, իսկ վաճառողը (կատարողը) պարտավոր է այդ կանոնների մասին տեղեկացնել սպառողին: Սպառողի կյանքի, առողջության և գույքի անվտանգությունն ապահովող պահանջները ենթակա են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համապատասխանության պարտադիր հավաստման: Եթե պարզվել է, որ ապրանքի (աշխատանքի) օգտագործման, պահման կամ փոխադրման սահմանված կանոններն սպառողի կողմից պահպանելու դեպքում ապրանքը (աշխատանքը) վնաս է պատճառում կամ կարող է վնաս պատճառել սպառողի կյանքին, առողջությանը և գույքին, ապա արտադրողը (կատարողը, վաճառողը) պարտավոր է անհապաղ դադարեցնել դրա արտադրությունը (իրացումը) մինչև վնասի պատճառի վերացումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ միջոցներ ձեռնարկել այն շրջանառությունից անհապաղ հանելու և սպառողից, նրա համաձայնությամբ, հետ վերցնելու համար: Վաճառողի (կատարողի) կողմից սպառողների կյանքի, առողջության և գույքի համար վտանգ ներկայացնող ապրանքների իրացման (աշխատանքի կատարման) համար վաճառողը (կատարողը) պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ սպառողների իրավունքների խախտման համար վաճառողը (արտադրողը, կատարողը) կրում է օրենքով և (կամ) պայմանագրով նախատեսված պատասխանատվություն: Սպառողին պատճառված վնասները ենթակա են հատուցման լրիվ չափով՝ չհաշված նույն օրենքով կամ պայմանագրով սահմանված տուժանքը (տուգանքը): Վաճառողը (արտադրողը, կատարողը) ազատվում է պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե ապացուցի, որ պարտավորությունների կատարումը կամ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի կամ սպառողի կողմից ապրանքի (աշխատանքի, ծառայության) օգտագործման, պահման և փոխադրման սահմանված կանոնների խախտման կամ երրորդ անձանց գործողությունների հետևանքով: Սպառողն իրավունք ունի պայմանագրից բխող կամ դրա հետ կապված վեճը հանձնել դատարան, եթե իր հետ կնքվել է այնպիսի պայմանագիր, որը ողջամիտ հնարավորություն չի ընձեռել սպառողին բանակցելու դրա պայմանները, բացառությամբ եթե արբիտրաժային համաձայնությունը կնքվել է վեճը ծագելուց հետո, և կողմերն անվերապահորեն

համաձայնել են վեճը հանձնել արբիտրաժային տրիբունալի լուծմանը: Նույն պահանջները տարածվում են ցանկացած պարտադիր գործընթացի վրա, որով սպառողի՝ դատարան դիմելու իրավունքը կարող է սահմանափակվել:

Օրենքի 15-րդ հոդվածը սահմանում է, որ ապրանքի (աշխատանքի, ծառայության) կառուցվածքային, արտադրական, բաղադրագրային կամ այլ թերությունների հետևանքով սպառողի կյանքին, առողջությանը պատճառած վնասը ենթակա է հատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ նույն օրենքով սահմանված կարգով: Ապրանքի (աշխատանքի, ծառայության) թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման պահանջի իրավունք վերապահվում է ցանկացած տուժողի՝ անկախ վաճառողի (կատարողի) հետ պայմանագրային հարաբերությունների մեջ նրա լինելու կամ չլինելու հանգամանքից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, մտավոր գործունեության արդյունքների նկատմամբ բացառիկ իրավունքների (մտավոր սեփականություն) ծագման հիմքերն ու իրականացման կարգը, կարգավորում են պայմանագրային և այլ պարտավորություններ, ինչպես նաև այլ գույքային ու դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերություններ:

Քաղաքացիական օրենսդրությունը և այլ իրավական ակտերը կարգավորում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձանց միջև կամ նրանց մասնակցությամբ հարաբերությունները:

Օրենգրքի 442-րդ հոդվածով նախատեսվում է, որ հրապարակային է համարվում առևտրային կազմակերպության կնքած և ապրանքներ վաճառելու, աշխատանքներ կատարելու կամ ծառայություններ մատուցելու նրա պարտականությունները սահմանող պայմանագիրը, որոնք այդ կազմակերպությունն իր գործունեության բնույթով պետք է իրականացնի յուրաքանչյուրի նկատմամբ, ով կդիմի իրեն (մանրածախ առևտուր, ընդհանուր օգտագործման տրանսպորտով փոխադրումներ, կապի ծառայություններ, էներգամատակարարում, բժշկական, հյուրանոցային սպասարկում և այլն): Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գինը, ինչպես նաև հրապարակային պայմանագրի այլ պայմանները բոլոր սպառողների համար սահմանվում են միանման: Սպառողին ապրանքներ տրամադրելու, նրա համար աշխատանքներ կատարելու և նրան ծառայություններ մատուցելու հնարավորության դեպքում առևտրային կազմակերպությունը չի կարող հրաժարվել հրապարակային պայմանագիր կնքելուց:

Էներգամատակարարման բնագավառում ծագող իրավահարաբերությունները կարգավորող օրենսգրքի 550-560-րդ հոդվածներով նախատեսվում է, որ Էներգամատակարարման պայմանագրով էներգամատակարարող կազմակերպությունը պարտավորվում է աբոնենտին (սպառողին) միացման ցանցի միջոցով մատուցել էներգիա, իսկ աբոնենտը պարտավորվում է վճարել ստացած էներգիայի համար, ինչպես նաև պահպանել պայմանագրով նախատեսված սպառման ռեժիմը, ապահովել իր տնօրինության տակ գտնվող էներգետիկ ցանցերի շահագործման անվտանգությունը և իր

կողմից օգտագործվող էներգիայի սպառման հետ կապված սարքերի ու սարքավորումների սարքինությունը: Էներգամատակարարման պայմանագիրը կնքվում է գրավոր: Այն աբոնենտի հետ կնքվում է նրա մոտ էներգամատակարարող կազմակերպության գծերին միացված ու սահմանված տեխնիկական պահանջները բավարարող էներգաընդունիչ և այլ անհրաժեշտ սարքավորումների առկայության, ինչպես նաև սպառված էներգիայի հաշվառման ապահովվածության դեպքում: Այն դեպքում, երբ էներգամատակարարման պայմանագրով որպես աբոնենտ հանդես է գալիս կենցաղային սպառման համար էներգիա օգտագործող քաղաքացին, պայմանագիրը կնքված է համարվում միացված ցանցին սահմանված կարգով աբոնենտի առաջին փաստացի միացման պահից: Էներգամատակարարող կազմակերպությունը պարտավոր է միացված ցանցի միջոցով աբոնենտին մատուցել էներգամատակարարման պայմանագրով նախատեսված քանակով էներգիա՝ իր ու աբոնենտի միջև համաձայնեցված մատուցման ռեժիմի պահպանմամբ: Էներգամատակարարող կազմակերպության մատուցած և աբոնենտի օգտագործած էներգիայի քանակը որոշվում է դրա փաստացի սպառման հաշվարկի տվյալներին համապատասխան: Էներգամատակարարող կազմակերպության մատուցած էներգիայի որակը պետք է համապատասխանի պետական ստանդարտներով և այլ պարտադիր կանոններով սահմանված կամ էներգամատակարարման պայմանագրով նախատեսված պահանջներին: Աբոնենտը պարտավոր է ապահովել շահագործվող էներգետիկ ցանցերի, սարքերի և սարքավորումների պատշաճ տեխնիկական վիճակն ու անվտանգությունը, պահպանել էներգիայի սպառման համար սահմանված ռեժիմը, ինչպես նաև էներգամատակարարող կազմակերպությանն անհապաղ տեղեկացնել վթարների, հրդեհների, էներգիայի հաշվիչ սարքերի անսարքությունների և էներգիան օգտագործելու ժամանակ առաջացած այլ խախտումների մասին: Այն դեպքում, երբ էներգամատակարարման պայմանագրով որպես աբոնենտ հանդես է գալիս էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող քաղաքացին, էներգետիկ ցանցերի, ինչպես նաև էներգիայի օգտագործման հաշվիչ սարքերի պատշաճ տեխնիկական վիճակի և անվտանգության ապահովման պարտականությունը դրվում է էներգամատակարարող կազմակերպության վրա, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով: Աբոնենտը վճարում է էներգիայի հաշվման տվյալներին համապատասխան իր փաստացի ընդունած էներգիայի քանակի համար, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով, այլ իրավական ակտերով կամ կողմերի համաձայնությամբ: Այն դեպքում, երբ էներգամատակարարման պայմանագրով որպես աբոնենտ հանդես է գալիս էներգիան կենցաղային սպառման համար օգտագործող քաղաքացին, նա իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը՝ այդ մասին էներգամատակարարող կազմակերպությանը տեղեկացնելու և օգտագործված էներգիայի համար ամբողջությամբ վճարելու պայմանով: Էներգիայի մատուցման ընդհատում, սահմանափակում կամ դադարեցում թույլատրվում է միայն կողմերի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ աբոնենտի էներգետիկ սարքերի անբավարար վիճակը, որը հավաստագրված է էներգետիկ հսկողության պետական մարմնի կողմից, սպառնում է վթարներ առաջացնել կամ սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կյանքի և անվտանգության համար: Էներգամատակարարող կազմակերպությունն էներգիայի

մատուցումն ընդհատելու, սահմանափակելու կամ դադարեցնելու մասին պարտավոր է նախազգուշացնել աբոնենտին: Առանց աբոնենտի հետ համաձայնեցնելու և նրան նախազգուշացնելու էներգիայի մատուցման ընդհատում, սահմանափակում կամ դադարեցում թույլատրվում է միայն էներգամատակարարող կազմակերպության համակարգում վթարները վերացնելու կամ կանխելու համար անհետաձգելի միջոցառումներ ձեռնարկելու անհրաժեշտության դեպքում՝ աբոնենտին այդ մասին անհապաղ տեղեկացնելու պայմանով: Էներգամատակարարման պայմանագրով պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում պարտավորությունը խախտած կողմը պարտավոր է մյուս կողմին հատուցել պատճառված իրական վնասը (17 հոդվածի 2-րդ կետ): Եթե օրենքի կամ այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող էներգիայի սպառման ռեժիմի կարգավորման արդյունքում աբոնենտին էներգիա մատուցելիս թույլ է տրվել ընդհատում, էներգամատակարարող կազմակերպությունը, մեղքի առկայության դեպքում, պատասխանատվություն է կրում պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 1091-րդ հոդվածով ամրագրված է, որ ապրանք վաճառողը կամ արտադրողը, աշխատանքներ կատարողը կամ ծառայություններ մատուցողն ազատվում է պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ վնասը ծագել է անհաղթահարելի ուժի կամ սպառողի կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների օգտագործման կամ դրանց պահպանման համար սահմանված կանոնները խախտելու հետևանքով:

«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով ամրագրված է, որ հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտը (այսուհետ՝ հանրային ծառայությունների ոլորտ) իր մեջ ներառում է՝

ա) էներգետիկայի բնագավառը, որը ներառում է էլեկտրաէներգետիկական, ջերմամատակարարման, գազամատակարարման համակարգերը.

բ) ջրային ոլորտը.

գ) հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառը.

դ) փոստային կապի բնագավառը.

ե) երկաթուղային տրանսպորտի բնագավառը՝ ենթակառուցվածքի օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանության, օգտագործման վճարի հաշվարկի իրականացման և օգտագործման վճարի հաստատման մասով.

զ) տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման բնագավառ՝ միայն սակագների մասով:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է կարգավորող մարմնի կողմից օրենքներով սահմանված իր իրավունքների և պարտականությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և հանրային ծառայությունների ոլորտում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց շահերը, կարգավորվող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ, նպաստել մրցակցային շուկաների ձևավորմանն ու զարգացմանը և խթանել ռեսուրսների արդյունավետ օգտագործումը:

Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման հիմնական սկզբունքներն են (Օրենքի 5-րդ հոդված)՝

ա) կարգավորման իրականացումն ինքնավար պետական մարմնի կողմից՝ օրենքներով սահմանված իրավասությունների շրջանակում.

բ) կարգավորող մարմնի որոշումների ընդունման կոլեգիալությունը և անկախությունը.

գ) կարգավորման թափանցիկության ապահովումը հանրության համար.

դ) սպառողների կամ որևէ կարգավորվող անձի նկատմամբ խտրականության բացառումը.

ե) սպառողների և կարգավորվող անձանց շահերի հավասարակշռումը՝ սպառողներին որակյալ ծառայությունների մատուցում երաշխավորելու համար անհրաժեշտ իրավատնտեսական նախադրյալների ձևավորման և ծառայությունների հիմնավորված սակագների սահմանման միջոցով, միաժամանակ ապահովելով ներդրողների՝ ռիսկերին համարժեք, ողջամիտ հասույթ ստանալու հնարավորությունը.

զ) մրցակցային շուկաների զարգացմանը համընթաց կարգավորման շրջանակների սահմանափակումը, ինչպես նաև հանրային ծառայությունների ոլորտում ոչ մրցակցային շուկաների առաջացման դեպքում կարգավորման ներդրումը.

է) հանրային ծառայությունների ոլորտում շուկաներ մուտքի խոչընդոտների կրճատումը և կարգավորվող անձանց կողմից մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) հասանելիության կանոնների պահպանման ապահովումը.

ը) հասցեական կարգավորումը.

թ) հանձնաժողովի կողմից սահմանվող սակագների համապատասխանությունը մատուցվող ծառայությունների (վաճառվող ապրանքների) սպասարկման որակին:

Նույն օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ հանրային ծառայությունների ոլորտում կարգավորումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, որն ինքնավար մարմին է:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքով կարգավորում է Հայաստանի Հանրապետության պետական մարմինների էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող անձանց և էլեկտրական, ջերմային էներգիա ու բնական գազ սպառողների փոխհարաբերությունները:

Օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ էներգետիկայի բնագավառը հանրային ծառայություններ մատուցելու համար էլեկտրական և ջերմային էներգիայի արտադրության, էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի հաղորդման (փոխադրման), բաշխման ու մատակարարման, էլեկտրաէներգետիկական և բնական գազի ոլորտների համակարգերի օպերատորի, էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի ծառայության իրականացման, էլեկտրական էներգիայի (հզորության) մեծածախ առևտրի, էլեկտրական էներգիայի և բնական գազի ներկրման և արտահանման գործունեության մեջ ներգրավված տնտեսավարող սուբյեկտների (անկախ դրանց սեփականության ձևից), այդ գործունեությունների իրականացման համար անհրաժեշտ գույքի և էներգետիկական շուկային ծառայություններ մատուցող կառույցների համախումբն է:

Էներգետիկայի բնագավառի բաղկացուցիչ մասերն են՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգը.

բ) ջերմամատակարարման համակարգերը.

գ) գազամատակարարման համակարգը:

Օրենքի 5-րդ հոդվածով ամրագրված է, որ Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքներից մեկը սպառողների և էներգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը և շահերի հավասարակշռումն է:

«Էներգետիկայի մասին» օրենքի 4-րդ հոդվածի 27-րդ կետի համաձայն՝ «սպառող (բաժանորդ)» եզրույթը բնորոշվում է որպես՝ էլեկտրական էներգիայի (հզորության), բնական գազի և (կամ) ջերմային էներգիայի սպառման պահանջարկ ունեցող անձ, որն էներգիայի մատակարարման պայմանագիր է կնքել մատակարարման լիցենզիա ունեցող անձի (ներառյալ՝ երաշխավորված մատակարարի) հետ կամ գտնվում է այդ գործընթացում:

Նույն հոդվածի 25-րդ կետը տարբերակում է նաև «որակավորված սպառող» եզրութը, որը բնորոշվում է իբրև՝ սեփական դիմումի հիման վրա հանձնաժողովի հաստատած՝ շուկայի կանոններով սահմանված չափանիշներին համապատասխանելու հիմքով էլեկտրաէներգետիկական շուկայի օպերատորի կողմից որակավորված ճանաչված սպառող, ինչպես նաև «խոցելի սպառողներ» անձանց խումբը, որի տակ նկատի են ունեցվում այն սպառողները, որոնց համար ՀՀ հանրային ծառայությունները ըարգավորող հանձնաժողովի կողմից սահմանվում են էներգիայի և բնական գազի մատակարարման հատուկ սակագներ և պայմաններ:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության հիմնական սկզբունքները, որոնք, նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն առանցքային ելակետային ղեկավար չափանիշներ (պահանջներ), ինչպես նաև յուրահատուկ երաշխիքներ են հանդիսանում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում պետական կառավարման և կարգավորող մարմիններն իրենց իրավասությունների սահմաններում պետական քաղաքականություն իրականացնելիս: Դրանցում, ի թիվս այլոց, սահմանված են նաև սպառողների իրավունքներին ու շահերին վերաբերող ներքոհիշյալ հիմնադրույթները.

«դ) սպառողների և էերգետիկայի բնագավառի տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովումը և շահերի հավասարակշռումը.

ժգ) խոցելի սպառողների շահերի պաշտպանությունը»:

Նույն հարցի շրջանակներում «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը սահմանում է, որ էներգետիկայի բնագավառի կարգավորումը պետական քաղաքականության մի մասն է, որի նպատակն է հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացմամբ հավասարակշռել սպառողների և լիցենզիա ունեցող անձանց շահերը, լիցենզիա ունեցող անձանց համար ստեղծել գործունեության միատեսակ պայմաններ և նպաստել մրցակցային շուկայի ձևավորմանն ու զարգացմանը՝ երաշխավորելով սպառողների իրավունքները:

Սպառողների իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման ապահովմանն ուղղված յուրօրինակ չափանիշներ (պահանջներ) ու երաշխիքներ են հանդիսանում «Էներգետիկայի մասին» օրենքի 20-րդ հոդվածով սահմանված

«գաղտնիությունը» բնութագրող գործընթացները, որոնց շարքում, ի թիվս այլ երաշխիքների սահմանված են հետևյալ իրավակարգավորումները.

«4. Լիցենզավորված անձը պարտավոր է իր սպառողների կողմից օգտագործվող ծառայությունների տեսակի, վայրի, նպատակի, քանակի և տեխնիկական պայմանների, ծառայությունների դիմաց վճարումների, պարտքերի, վճարումների սովորությունների կամ պարտավորությունների կամ դրանց կատարման մասին տեղեկությունների վերաբերյալ տեղեկատվությունը համարել և պահել գաղտնի:

5. Լիցենզավորված անձինք իրավասու են բացահայտելու սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկությունները՝

ա) օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ հանցագործության բացահայտման, քրեական հետապնդման առնչությամբ կամ ազգային անվտանգության դեմ սպառնալիքի դեպքում.

բ) հանձնաժողովի պահանջով՝ հանձնաժողովին վերապահված իրավասությունների իրականացման շրջանակում.

գ) եթե բացահայտումն անհրաժեշտ է ի պաշտպանություն լիցենզավորված անձի (ընթանում են վարույթներ ընդդեմ այդ լիցենզավորված անձի): Սպառողը կարող է պահանջել, որ բացահայտումը կատարվի գաղտնիության կարգով՝ դռնփակ վարույթների միջոցով.

դ) «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված վարկային բյուրոներին՝ այդ օրենքով նախատեսված կարգով և սահմաններում:»:

Սպառողների իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման ապահովմանն ուղղված չափանիշների (պահանջների) և երաշխիքների համատեքստում կարելի է դիտարկել նաև էներգետիկայի բնագավառում արտադրության, մատակարարման, օպերատորական, բաշխման և այլ լիցենզիաներ ունեցողներին վերապահված մի շարք պարտականություններ, ինչպես նաև սպառողներին վերապահված մի շարք իրավունքներ: Մասնավորապես, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի՝

22-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված է հետևյալը.

«Լիցենզավորված անձը կարող է կիրառել հանձնաժողովի սահմանած սակագնից ավելի ցածր սակագին, պայմանով, որ չի վտանգում կամ չի վտանգի լիցենզավորված գործունեությունը: Երաշխավորված մատակարարի կողմից ավելի ցածր սակագին կիրառվելու դեպքում այն ենթակա է կիրառման տվյալ սպառողական խմբի բոլոր սպառողների նկատմամբ:»:

35-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված է հետևյալը.

«Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձինք հանձնաժողովի սահմանած սակագներով պարտավոր են էլեկտրական էներգիան վաճառել երաշխավորված մատակարարին, այլ մատակարարներին և որակավորված սպառողներին՝ շուկայի կանոններով սահմանված դեպքերում և կարգով:»:

37-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է հետևյալը.

«3. Էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձանց կարգավարելիս էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորը ձեռնարկում է բոլոր

անհրաժեշտ միջոցները, որոնք կհանգեցնեն սպառողների համար էլեկտրական էներգիայի (հզորության) նվազագույն ծախսումներով արտադրությանը և հաղորդմանը՝ հաշվի առնելով արտադրողներին տրված էլեկտրական էներգիայի գնման երաշխիքները:» և այլն:

38.2-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված է հետևյալը.

«Էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի լիցենզիա ունեցող անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է մատուցելու էլեկտրական էներգիայի մատակարարման ծառայություն բոլոր այն սպառողներին, որոնք չեն օգտվում այլ մատակարարի ծառայությունից, կամ որոնց ընտրած մատակարարի կողմից էլեկտրական էներգիայի մատակարարում չի իրականացվում՝ սպառողից անկախ պատճառներով:»:

39.5-րդ հոդվածում սահմանված է հետևյալը.

«1. Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկան ներառում է մատակարարների և (կամ) երաշխավորված մատակարարի կողմից սպառողներին (բացառությամբ որակավորված սպառողների) էլեկտրաէներգիայի մատակարարումը՝ հանձնաժողովի սահմանած կանոնների համաձայն:

2. Սպառողն իրավունք ունի իր հայեցողությամբ ընտրելու մատակարար և շուկայի կանոնների համաձայն՝ փոխարինելու վերջինիս:»:

42-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ մասերով սահմանված է հետևյալը.

«Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով … այն ուղղակիորեն հանգեցրել է մի խումբ սպառողների իրավունքների կամ օրինական շահերի խախտման … առաջացնում է տուգանք …:»:

Ի վերջո, «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի՝ «Սպառողների էներգամատակարարման երաշխիքները» վերտառությամբ 9-րդ գլխով սպառողների (այդ թվում՝ խոցելի սպառողների) համար իրավակազմակերպական երաշխիքներ են սահմանված՝ էներգամատակարարման և դրա անխափանության ապահովման, էներգափոխանցման, էներգամատակարարման առաջնահերթության պայմանների տրամադրման, էներգամատակարարման սահմանափակումների, նոր կամ վերակառուցված սպառման համակարգը կամ կայանը էլեկտրական կամ բնական գազի հաղորդման կամ բաշխման ցանցերին ոչ խտրական պայմաններով միացման, էներգակայանքների տեղափոխման ծախսերի հատուցման և մյուս հարցերի մասով:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի N 95-Ն որոշմամբ հաստատվել է **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները»**, իսկ 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշմամբ՝ **«Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները»**:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի նպատակն ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև նույն օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը (հոդված 6):

Օրենգրքի 7-րդ հոդվածում ամրագրվում է, որ օրենսգրքի խնդիրների թվում են նաև ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծումը, ջրերի վնասակար ներգործության կանխարգելումը, ջրային ռեսուրսների հաշվառման ապահովումը, բնակչությանն ու տնտեսությանը կարգավորվող սակագներով անհրաժեշտ քանակի և որակի ջրով ապահովումը, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովումը և վերահսկողության իրականացումը:

Օրենսգրքի 5-րդ հոդվածով ամրագրված են Հայաստանի Հանրապետությունում ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները, որոնց թվում են նաև ջրօգտագործման թույլտվությունների միջոցով ջրօգտագործման կարգավորումը, ջրամատակարարման համակարգերի կառավարումը և կարգավորումը, օգտագործելի ջրային ռեսուրսների մատչելիության արդարացի սկզբունքների խթանումը, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանումը՝ ի շահ հասարակության, սպառողի համար նվազագույն բավարար քանակության և անհրաժեշտ որակի ջրի օգտագործումը մատչելի դարձնելու նպատակով ջրի սակագգնի սահմանումը՝ ելնելով ջրի սակավության նվազեցված արժեքից, ինչպես նաև ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման գործընթացում հասարակության մասնակցության և իրազեկության կարևորության ճանաչումը:

Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ կարգավորող հանձնաժողովն իրավասու է՝

1) սահմանելու ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները և դրանց հաշվարկման (մշակման) մեթոդիկաները.

2) ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ոլորտում իրականացնելու լիցենզավորում՝ սույն օրենսգրքին համապատասխան իր հաստատած լիցենզավորման կարգի համաձայն.

3) վերահսկելու ջրամատակարարման, ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ոլորտում իր տրամադրած լիցենզիայի պայմանների կատարումը, իրականացնելու լիցենզավորված անձանց գործունեության մոնիթորինգ (մշտադիտարկում) և կիրառելու սույն օրենսգրքով սահմանված տուժանքները.

4) սահմանելու խմելու ջրամատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները.

5) սահմանելու լիցենզավորված անձանց և բաժանորդների միջև կնքվող՝ խմելու ջրամատակարարման կամ ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագրերի օրինակելի ձևերը կամ պարտադիր պայմանները.

6) իր սահմանած կարգով կազմակերպելու քննարկումներ Կարգավորող հանձնաժողով ուղղված հարցադրումների, բողոքների վերաբերյալ և քննարկումների արդյունքով կայացնելու որոշումներ.

7) լիցենզավորված անձանց համար սահմանելու Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխանող հաշիվներ և ենթահաշիվներ՝ կարգավորմանը վերաբերող հաշվետվությունների ներկայացման նպատակով.

8) սահմանելու սպառողներին մատուցվող ծառայությունների որակին (սպասարկման որակին) ներկայացվող նվազագույն պահանջները.

9) ապահովելու իր ընդունած որոշումների կիրարկումը, կատարման նկատմամբ հսկողությունը և մեկնաբանումը:

Օրենսգրքի 79[1]-րդ հոդվածով նախատեսվում է, որ սակագների գործողության ժամկետը մեկ տարուց պակաս չի կարող լինել, բացառությամբ այն դեպքի, երբ սահմանված սակագների մեծությունների՝ դատական կարգով բողոքարկման արդյունքում դատարանի վճռի հիման վրա Կարգավորող հանձնաժողովն ընդունում է սակագնի սահմանման վերաբերյալ նոր որոշում: Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ Կարգավորող հանձնաժողովի նախաձեռնությամբ: Կարգավորող հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ կարող է վերանայել սակագինը և սահմանել նոր սակագին՝ իր հաստատած կարգի համաձայն՝ ելնելով լիցենզավորված անձի տնտեսական գործունեության արդյունքներից, ներդրումային ծրագրերի և սպառողներին մատուցվող ծառայությունների որակի նկատմամբ ներկայացված պահանջների կատարումից:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի N 378-Ն որոշմամբ հաստատվել է **«Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները»**:

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով սահմանվում են վերջնական օգտագործողների, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների, հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների, մասնավոր էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների և պետական մարմինների իրավունքները, պարտականությունները և պատասխանատվությունը էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի կարգավորման, ինչպես նաև էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի ստեղծման, զարգացման, շահագործման և էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման առնչությամբ, ինչպես նաև պետական հսկողությունը և վերահսկողությունն այնպիսի սահմանափակ ռեսուրսների տրամադրման և օգտագործման նկատմամբ, ինչպիսիք են ռադիոհաճախականությունները, արբանյակային ուղեծրի հատվածները և համարները (3-րդ հոդված):

Օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ օրենքի հիմնական նպատակներից են Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների հասանելիության, բաց շուկայական տնտեսության պայմաններում էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ օգտագործողների, էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների և էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ մատուցողների շահերի պաշտպանության ապահովումը:

Օրենքի 2-րդ հոդվածով պարզաբանվել են մի շարք եզրույթներ, այդ թվում՝

• էլեկտրոնային հաղորդակցության ծառայություն՝ ծառայություն, որը, որպես կանոն, մատուցվում է հատուցման դիմաց, և ամբողջությամբ կամ մասամբ բաղկացած է էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով ազդակների հաղորդումից, իսկ համապատասխան դեպքերում՝ ազդակների ուղղորդումից, սակայն չի ներառում

էլեկտրոնային հաղորդակցության ցանցերով հաղորդվող բովանդակության նկատմամբ խմբագրական հսկողություն տրամադրող կամ իրականացնող ծառայությունները.

• հաճախորդ կամ բաժանորդ՝ ցանկացած անձ, որն օգտագործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ կամ դիմում է դրանց օգտագործման համար: Սույն հասկացությունը չի տարածվում այն անձանց վրա, որոնք առաջարկում կամ մատուցում են հեռահաղորդակցության ծառայություններ.

• վերջնական օգտագործող՝ ցանկացած անձ, որն օգտագործում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ, սակայն այդպիսիք չի առաջարկում երրորդ անձանց.

• ծառայություններ մատուցող՝ Կարգավորողի կողմից լիազորված կամ Կարգավորողին նույն օրենքի համաձայն ծանուցում ներկայացրած ցանկացած անձ, որն առաջարկում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններ:

Նույն օրենքի 5-րդ հոդվածում ամրագրված են կարգավորողի մի շարք գործառույթները, այդ թվում՝

1) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների և ցանցերի ոլորտում ապահովել մրցակցություն հետևյալ եղանակներով՝

ա) ապահովելով մատուցված ծառայությունների, դրանց հարակից ենթակառուցվածքների ընտրության, գների և որակի առավել օգտավետությունը վերջնական օգտագործողների համար,

բ) բացառելով էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման և ցանցի ոլորտում մրցակցության որևէ աղավաղումը,

գ) խրախուսելով արդյունավետ ներդրումները ենթակառուցվածքներում և խթանելով նորարարությունը,

դ) խրախուսելով ռադիոհաճախականությունների տիրույթի, արբանյակային ուղեծրի հատվածների և համարային ռեսուրսների արդյունավետ օգտագործումը՝ ապահովելով դրանց արդյունավետ կառավարումը.

2) կարգավորել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերը և ծառայությունները նույն օրենքին համապատասխան, որի ապահովման համար՝

ա) դասակարգել ծառայությունները և (կամ) ենթակառուցվածքները,

բ) ամրագրել չափանիշներ և ընթացակարգեր ցանցի լիցենզիաների, համարի և կոդերի զբաղեցման, հաճախականության օգտագործման թույլտվությունների համար դիմելու, դրանց տրամադրման, փոփոխման, կասեցման և դադարեցման համար,

գ) ամրագրել համընդհանուր ծառայություններ մատուցելու պարտավորությունները,

դ) սեփական նախաձեռնությամբ կամ շահառու կողմերի խնդրանքով իրականացնել ստուգումներ և աուդիտ՝ օրենսդրության, Կարգավորողի կողմից ընդունված իրավական ակտերի և լիցենզիայի պահանջների կատարումը երաշխավորելու նպատակով,

ե) ապահովել արդար և արդյունավետ մրցակցություն մրցակցային ծառայությունների և ցանցերի ոլորտում,

զ) մշակել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի փոխկապակցումը կարգավորող կանոնակարգեր,

է) սահմանել և կիրառել դրույքաչափերը կարգավորող կանոններ,

ը) սահմանել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների և ծառայություններ մատուցողների համար գործունեության որակի որոշակի չափանիշներ,

թ) իրավասու մարմնին առաջարկել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ոլորտի տեխնիկական ստանդարտներ,

ժ) սահմանել հաշվապահական հաշվառման ստանդարտներ և հաշվետվություն ներկայացնելու պահանջներ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի օպերատորների և ծառայություն մատուցողների համար,

ժէ) ապահովել, որպեսզի վերջնական օգտագործողները հավասար սկզբունքներով առավելագույնս հնարավորություն ունենան օգտվելու օպերատորների և ծառայություններ մատուցողների կողմից առաջարկվող վարձակալված գծերից,

ժը) լուծել վեճեր գերիշխող օպերատորի և ցանկացած այլ օպերատորի, ծառայություններ մատուցողի և վերջնական օգտագործողի, ինչպես նաև ծառայությունների մատուցման մեջ գերիշխողի և վերջնական օգտագործողի միջև և այլն:

Օրենքի 9-րդ գլխում շարադրված են սպառողների իրավունքների պաշտպանությանը նվիրված հիմնադրույթները, այդ թվում՝ առանց խտրականության, անընդհատ ծառայություններ մատուցելու օպերատորի պարտականությունը (Օրենքի 43-րդ հոդված), իսկ 55-րդ հոդվածով ամրագրված է, որ վերջնական օգտագործողներն ունեն հետևյալ իրավունքները՝

1) հավասար հիմունքներով օգտվել հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից.

2) ստանալ իրենց մատուցված ծառայությունների վճարների մասին մանրամասն տեղեկություններ պարունակող հաշիվ-ապրանքագրեր.

3) հրաժարվել ծառայությունների սակագնով կամ ծառայությունների մատուցման պայմանագրով չնշված ծառայությունների դիմաց վճարելուց.

4) էլեկտրոնային հաղորդակցության գաղտնիության իրավունք.

5) Հայաստանի Հանրապետության օրենքներով և նույն օրենքով նախատեսված ցանկացած այլ իրավունք:

«Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով (հոդված 1) սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում փոստային կապի բնագավառում գործունեության իրականացման իրավական հիմքերը, փոստային կապի գործունեության կարգավորմանն ուղղված պետական կառավարման մարմինների լիազորությունները, ինչպես նաև փոստային կապի գործունեությանը մասնակցող կամ փոստային կապի և սուրհանդակային կապի ծառայություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում փոստային կապի բնագավառում գործունեության սկզբունքներն են՝

ա) փոստային կապի կամ սուրհանդակային կապի հաղորդակցության ազատության և գաղտնիության ապահովումը.

բ) փոստային կապի ունիվերսալ ծառայություններից օգտվելու մատչելիությունը.

գ) փոստային առաքանիների տարանցման ազատությունը.

դ) փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողների իրավունքների հավասարությունը.

ե) փոստային կապի կառավարելիության և հուսալիության ապահովումը:

Փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայություններից օգտվողներն ունեն փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայություններից օգտվելու հավասար իրավունքներ, նրանք իրավունք ունեն ստանալու մատչելի տեղեկատվություն մատուցվող փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների, փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների սակագների, փոստային առաքանիների առաքման հսկիչ ժամկետների, առաքման համար արգելված առարկաների և նյութերի, փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների մատուցման լիցենզիայի գործողության ժամկետի վերաբերյալ (հոդված 5):

Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսվում է, որ ի թիվս այլ պարտականությունների, փոստային կապի և (կամ) սուրհանդակային կապի օպերատորը և ազգային օպերատորը պարտավոր են ապահովել փոստային կապի կամ սուրհանդակային կապի գործունեությունը կանոնակարգող նորմատիվ փաստաթղթերով սահմանված ստանդարտներին համապատասխան՝ փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների որակը, ինչպես նաև դրա համապատասխանությունը պայմանագրի պայմաններին և տվյալ ծառայությունների մատուցման պայմանների վերաբերյալ տեղեկատվությանը, ապահովել մատչելի տեղեկատվություն փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների սակագների, փոստային առաքանու առաքման ժամկետների, աշխատանքի ռեժիմի վերաբերյալ, ինչպես նաև անհրաժեշտ այլ տեղեկություններ, որ մատչելի է դարձնում փոստային կապի կամ սուրհանդակային կապի ծառայությունների մատուցումը:

«Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի գործունեության իրավական, կազմակերպական և տնտեսական հարաբերությունները, սահմանում է ոչ ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի պետական կարգավորման հիմունքները, ինչպես նաև կարգավորում է երկաթուղային տրանսպորտի գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի փոխհարաբերությունները պետական կառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ (հոդված 1):

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ երկաթուղային տրանսպորտի գործունեության իրականացման սկզբունքներն են՝

1) աշխատանքի անխափանությունը և կայունությունը.

2) մատուցվող ծառայությունների մատչելիությունը, անվտանգության և որակի ապահովումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 34-րդ կետով սահմանվում է, որ ենթակառուցվածքի օգտագործման վճարը փոխադրողի կողմից ենթակառուցվածքի օգտագործման համար ենթակառուցվածքի կառավարչին տրվող վճարն է:

Օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ երկաթուղային տրանսպորտի բնագավառում պետական քաղաքականությունն իրականացվում է հետևյալ սկզբունքներով՝

1) պետության, երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվողների և ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտի կազմակերպությունների շահերի ապահովում.

2) երկաթուղային տրանսպորտի, ինչպես նաև նրա համալիր զարգացման ամբողջական, արդյունավետ, անվտանգ և որակյալ գործունեության ապահովում.

3) ենթակառուցվածքի կառավարչի և փոխադրողների հետ համատեղ իրականացվող փոխադրման գործընթացի անընդհատության ապահովում.

4) երկաթուղային տրանսպորտի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանության ապահովում.

5) շրջակա միջավայրի պահպանության խնդիրների գերակայության ապահովում.

6) օգտագործման միանման և անխտրական վճարների կիրառում.

7) մրցակցության զարգացում և երկաթուղային տրանսպորտի ծառայությունների շուկայի հիմնում:

Օրենքի 11-րդ հոդվածով նախատեսվում է, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը մշակում և հաստատում է օգտագործման վճարների հաշվարկման մեթոդաբանությունը (մեթոդիկան), հաստատում և իրականացնում է օգտագործման վճարի հաշվարկը: Օգտագործման վճարների գործողության ժամկետը մեկ տարուց պակաս չի կարող լինել, բացառությամբ այն դեպքերի, երբ սահմանված օգտագործման վճարների մեծությունների՝ դատական կարգով բողոքարկման արդյունքում դատարանի վճռի հիման վրա Կարգավորող հանձնաժողովն ընդունում է օգտագործման վճարների սահմանման վերաբերյալ նոր որոշում: Կարգավորող հանձնաժողովը կարող է սահմանել ենթակառուցվածքի կառավարչի գործունեության երկարաժամկետ օգտագործման վճար, իսկ անհրաժեշտության դեպքում՝ դրա ճշգրտման սկզբունքները: Օգտագործման վճարը կարող է վերանայվել ենթակառուցվածքի կառավարչի նախաձեռնությամբ: Կարգավորող հանձնաժողովը լիազոր մարմնի առաջարկությամբ կարող է վերանայել գործող օգտագործման վճարը և սահմանել նոր վճար՝ իր կողմից հաստատված ընթացակարգի համաձայն: Կարգավորող հանձնաժողովը օպերատորի բողոքի դեպքում իրավասու է վերահսկողություն իրականացնելու ենթակառուցվածքի կառավարչի կողմից օգտագործման վճարների կիրառման ճշտության նկատմամբ, ինչպես նաև ներկայացված հաշվետվությունների ու տեղեկատվությունների հավաստիության ճշգրտման նպատակով իրականացնելու կամ կազմակերպելու ֆինանսատնտեսական գործունեության ուսումնասիրություններ՝ պահանջելով հիմնավորող անհրաժեշտ փաստաթղթեր՝ օգտագործման վճարների կիրառման մասով: Կարգավորող հանձնաժողովն ընդունում է որոշումներ, որոնցով ապահովում է օգտագործման վճարների կիրառումը:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ երկաթուղային տրանսպորտի ենթակառուցվածքի օգտագործման վճարների ձևավորման սկզբունքներն են՝

1) լիցենզիայի պայմաններին համապատասխան լիցենզավորված գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների մաշվածության և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի փոխհատուցման ապահովումը.

2) ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը.

3) հիմնավորված վարկերի սպասարկման ծախսերի ներառումը.

4) ծառայությունների տեսակներով և առանձնահատկություններով պայմանավորված օգտագործման վճարների տարբերակումը.

5) հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը.

6) բնապահպանական նորմերն ապահովելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված ծախսերի ներառումը.

7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառումը:

Երկաթուղային տրանսպորտի ոլորտում գնագոյացման պետական կարգավորման սկզբունքներն ուղղված են ենթակառուցվածքի մենաշնորհային բաղադրիչի, այսինքն՝ ենթակառուցվածքի հիմնական միջոցների շնորհած շուկայական հզորությունը սահմանափակելու միջոցով տնտեսական արդյունավետությունը խրախուսելուն, որն իրականացվում է ենթակառուցվածքի օգտագործման ոչ խտրական վճարների կիրառման միջոցով, որոնք նվազագույնի են հասցնում մրցակից փոխադրողների համար ենթակառուցվածքի օգտագործման խոչընդոտները: Գնագոյացման վերահսկողությունը կիրառվում է ենթակառուցվածքի օգտագործման վճարների և ոչ թե երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվողների համար փոխադրողի սահմանած վերջնական սակագների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ երկաթուղային տրանսպորտի ծառայություններից օգտվողների համար փոխադրողի սահմանած սակագները կարող են սահմանափակվել միջազգային համաձայնագրերով կամ արտակարգ իրավիճակներում կամ մենաշնորհային դիրքի չարաշահման կամ տնտեսության համար վտանգավոր կամ ոչ նպաստավոր գործունեության դեպքերում կառավարության որոշմամբ սահմանված առավելագույն սակագներով:

«Տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման և վերանայման մասին» ՀՀ օրենքը կարգավորում է տեխնիկական արատորոշման միջոցներով տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության անցկացման ծառայությունների մատուցման համար գանձվող սակագների սահմանման սկզբունքները, ինչպես նաև դրանց սահմանումն ու վերանայումը (հոդված 1):

Օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ծառայությունների մատուցման սակագները սահմանում և վերանայում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, հիշյալ սակագների ձևավորման սկզբունքներն են՝

1) միանմանությունն ու միասնականությունը բոլոր ծառայություն մատուցողների համար Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում.

2) ծառայություններ մատուցելու համար անհրաժեշտ՝ հիմնավորված շահագործման և պահպանման ծախսերի, հիմնական միջոցների և նյութական ակտիվների մաշվածության փոխհատուցման ապահովումը.

3) մատչելիությունը՝ տվյալ ծառայության բոլոր սպառողների համար.

4) ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովումը.

5) մատուցվող ծառայության որակի բարձրացման խթանների ստեղծումը.

6) հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառումը.

7) տրանսպորտային միջոցների տեսակներով ու առանձնահատկություններով պայմանավորված սակագների տարբերակումը:

Սակագների սահմանումը և կիրառումը կանոնակարգող Օրենքի 3-րդ հոդվածով նախատեսվում է, որ սակագների սահմանման և վերանայման կարգը, այդ առնչությամբ ծառայություններ մատուցող անձանց կողմից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը և ցանկը սահմանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը՝ համաձայնեցնելով լիազոր մարմնի հետ: Հանձնաժողովը սակագները սահմանում է լիազոր մարմնի ներկայացրած առաջարկությունների հիման վրա: Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում որոշումն ընդունվելուց 30 օր հետո: Սակագների գործողության ժամկետը մեկ տարուց պակաս լինել չի կարող, բացառությամբ այն դեպքի, երբ սահմանված սակագների մեծությունների՝ դատական կարգով բողոքարկման արդյունքում դատարանի վճռի հիման վրա Հանձնաժողովն ընդունում է սակագնի սահմանման վերաբերյալ նոր որոշում: Հանձնաժողովը կարող է սահմանել ծառայությունների մատուցման երկարաժամկետ սակագին: Սահմանված սակագինը կարող է վերանայվել ինչպես ծառայություններ մատուցողների պահանջով՝ լիազոր մարմնի առաջարկությամբ, այնպես էլ Հանձնաժողովի նախաձեռնությամբ: Հանձնաժողովը սակագինը վերանայում (վերահաստատում կամ փոփոխում) և որոշում է կայացնում լիազոր մարմնի կողմից վերանայման հայտի փաթեթն ընդունելուց հետո՝ 90-օրյա ժամկետում:

Այսպիսով, վերը թվարկված իրավական ակտերով սահմանված են հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում պետական իրավասու մարմինների, ծառայություններ մատուցող կազմակերպությունների և սպառողների իրավունքներն ու պարտականությունները, գործառույթները, սպառողների իրավունքների պաշտպանության ու շահերի հավասարակշռման ապահովմանն ուղղված հիմնական չափանիշներն (պահանջներն) ու երաշխիքները:

Այնուամենայնիվ, կարգավորվող բնագավառների իրավական դաշտի կատարելագործումը նաև շարունակական գործընթաց է, և այն հանդիսանում է ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարևորագույն գործառույթներից մեկը:

Կարգավորվող ոլորտներում իրականացված բարեփոխումների շարքում նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման գործընթացի բարելավմանն ուղղված՝ հանձնաժողովը լրամշակել է իր 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնները և 2017 թվականի մայիսի 31-ի №218Ն որոշմամբ սահմանված՝ սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը: Նշված փոփոխություններով կրճատվել է նոր սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու սահմանված գործընթացների թիվը, մասնավորապես, սահմանվել են պարզեցված միացման դեպքերը, երբ դիմող անձի դիմումը ստանալուց հետո անմիջապես

վերջինիս ներկայացվում է սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագիր կնքելու առաջարկ՝ մատակարարի կողմից ստորագրված պայմանագրի 2 օրինակի հետ միասին: Կրճատվել են նաև 0.22 կՎ լարմամբ ոչ պարզեցված միացման դեպքերում էլեկտրական ցանցին միացման ժամկետները՝ 45 աշխատանքային օրվա փոխարեն սահմանելով 50 օրացուցային օր:

Նպատակ ունենալով այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողին մատուցած ծառայության վճարը համապատասխանեցնելու գործող գներին, հանձնաժողովը, 2017 թվականի դեկտեմբերի 20-ի №568Ն որոշմամբ սահմանել է, որ 2019 թվականի հունվարի 1-ից յուրաքանչյուր տարի՝ մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 1-ը վերանայում է հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 14-ի «Այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի հաշվարկման մեթոդիկան հաստատելու մասին» N 41-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածով սահմանված՝ այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայությունների վճարները՝ դրանց նկատմամբ կիրառելով ընթացիկ տարվա սեպտեմբեր ամսվա սպառողական գների ինդեքսը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ: Վերանայման արդյունքում սահմանված մեծությունները ուժի մեջ են մտնում տվյալ տարվան հաջորդող տարվա հունվարի 1-ից:

«Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության և Ատոմային Էներգիայի Եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և Ընդլայնված Գործընկերության» համաձայնագրից բխող 6 պարտավորությունների շրջանակում, նշված համաձայնագրին Հայաստանի Հանրապետության օրենսդրության մոտարկումից հետո հանձնաժողովը ևս 2019 թվականի ընթացքում իր իրավական ակտերը պետք է լրամշակի և համապատասխանեցնի համաձայնագրի դրույթներին:

2018 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, ինչով պայմանավորված՝ հանձնաժողովը ձեռնամուխ է լինելու իր մի շարք իրավական ակտերի, այդ թվում՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի, էլեկտրական էներգիայի (հզորության) և բնական գազի ներկրման ու արտահանման գործունեության լիցենզավորման կարգի, էներգետիկայի բնագավառում լիցենզավորված անձանց միջև, ինչպես նաև վերջիններիս և սպառողների միջև կնքվող պայմանագրերի օրինակելի ձևերի, էներգետիկայի բնագավառի լիցենզավորված անձանց միջև կնքված և էլեկտրական էներգիայի ու բնական գազի ներկրման և արտահանման պայմանագրերի գրանցման կարգի և մի շարք այլ իրավական ակտերի վերանայման, նոր իրավական ակտերի, այդ թվում՝ լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման համաձայնեցման կարգի մշակման աշխատանքներին:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն ուժի մեջ մտնելու պահից 18 ամսվա ընթացքում հանձնաժողովի կողմից ի թիվս այլ ակտերի հաստատվելու են էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր առևտրային կանոններ, էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկաների պայմանագրերի նոր օրինակելի ձևեր, մանրածախ շուկայի առևտրային կանոններ, բաշխման ցանցային կանոններ, լրամշակվելու են էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային 7 կանոնները:

Վերը նշված փոփոխություններով պայմանավորված՝ նախատեսվում է ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության հետ համատեղ մշակել ՀՀ էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդել և ներկայացնել էլեկտրաէներգետիկական շուկայի կարգավորման նոր գործիքներ՝ հենվելով ինչպես միջազգային առաջավոր փորձի, այնպես էլ ներքին շուկայի սպառողների պաշտպանության, արտադրության և սպառման շուկաներում պատասխանատվության միջոցների ներդրման և այլ հիմնարար սկզբունքների վրա:

Խմելու ջրի ոլորտում ոչ բաժանորդների կողմից ապօրինի միացմամբ խմելու ջրի սպառում և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործում հայտնաբերելու դեպքում ծառայությունների մատուցումն անմիջապես չդադարեցնելու և սահմանված կարգով նոր միացմամբ բաժանորդ դառնալու հնարավորություն ընձեռելու նպատակով լրամշակվել է հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ սահմանված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները և մշակվել է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ժամանակավոր պայմանագրի օրինակելի ձև:

Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքի տվյալներով՝ ներկայումս շրջանառության մեջ են գտնվում ՀՀ գերատեսչությունների կողմից մշակվող ներքոհիշյալ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը.

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 14-ի №41Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 14-ի №41Ն որոշմամբ սահմանվել է էլեկտրամատակարարող ընկերության (այսուհետև՝ մատակարար) կողմից սպառողի էլեկտրակայանքներով այլ սպառողներին (ենթասպառողներ կամ մատակարարի այլ ցանցեր) սնելու համար սպառողի մատուցած ծառայության վճարների ամսական չափի հաշվարկման կարգը: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 14-ի №41Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» №568Ն որոշմամբ վերանայվել են մեթոդիկայի դրամային

մեծությունները դրանք համապատասխանեցնելով ընթացիկ տարվա սպառողական գների մեծությանը: Հաշվի առնելով 2018 թվականի ընթացքում սպառողական գների ինդեքսի փոփոխությունները նշված դրամային մեծությունների վերանայման անհրաժեշտություն է ծագել:

Նախատեսվող փոփոխությունների նպատակն է էլեկտրամատակարարող ընկերության կողմից սպառողի էլեկտրակայանքներով այլ սպառողներին (ենթասպառողներ կամ մատակարարի այլ ցանցեր) սնելու համար սպառողի մատուցած ծառայության վճարները համապատասխանեցնել գործող գներին: Որոշման նախագծով առաջարկվում է 2004 թվականի ապրիլի 14-ի № 41Ն որոշման հավելվածով հաստատված՝ այլ սպառողների (ենթասպառողների) կամ մատակարարի այլ ցանցերի սնման համար սպառողի մատուցած ծառայության վճարների չափի հաշվարկման մեթոդիկայի դրամային մեծությունների վրա կիրառել 2018 թվականի սեպտեմբեր ամսվա սպառողական գների ինդեքսը 2017 թվականի հոկտեմբեր ամսվա նկատմամբ:

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ.

2018 թվականի փետրվարի 7-ին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով փոփոխվել են էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները, էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների իրավունքները և պարտականությունները, ուստի անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել վերջիններիս պայմանագրային հարաբերություններում, շուկայի առևտրային և ցանցային կանոններում, տարանջատել էլեկտրական էներգիայի բաշխման և մատակարարման (այդ թվում՝ երաշխավորված մատակարարման) գործառույթները:

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ.

Նպատակն է կարգավորման մեխանիզմների միջոցով մատակարար-բաժանորդ հարաբերությունների հստակեցումը, տրամադրվող անհրաժեշտ տեղեկատվության ընդլայնումը:

Նախագծի ընդունումը պայմանավորված է բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների հետագա կատարելագործմամբ և հստակեցմամբ:

Կանոնների լրամշակման արդյունքում ակնկալվում է՝

ա. Ճշգրտել առևտրային հաշվառքի սարքի էլեկտրոնային ճշտիչների խափանման դեպքերում սպառված բնական գազի վերահաշվարկման կարգը.

բ. Սահմանել դրույթ, որի համաձայն՝ այն դեպքերում, երբ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման արձանագրություն չի կազմվել և բաժանորդը չի համաձայնվում վճարել վերահաշվարկված բնական գազի համար, մատակարարը վեճը

լուծում է դատական կարգով՝ մինչև վեճի վերջնական լուծումը չդադարեցնելով բաժանորդի գազամատակարարումը.

գ. Բաժանորդի սպասարկման որակի հետագա բարելավման նպատակով մատակարարը պարտավոր է գազամատակարարման պլանային ընդհատումների մասին առնվազն 7 օր առաջ իր վեբ-կայքում հրապարակել նախնական տեղեկատվություն: Բացի այդ, հանրապետական սփռման առնվազն մեկ հեռուստաալիքով 2 անգամ բաժանորդներին տեղեկացնել հաջորդ օրվա գազամատակարարման պլանային ընդհատումների և վերականգնման վերջնական ժամկետների մասին.

դ. Հստակեցնել մատակարարի կողմից բաժանորդին տույժ վճարելու կարգը, համաձայն որի մատակարարը պարտավոր է բաժանորդին վճարել տույժ կանոններով սահմանված պահանջների յուրաքանչյուր խախտման համար:

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու և 2013 թվականի հոկտեմբերի 2-ի №339Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ.

2018 թվականի փետրվարի 7-ին ընդունված «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքով փոփոխվել են էներգետիկայի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները, ուստի անհրաժեշտություն է առաջացել համապատասխան փոփոխություններ կատարել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի N374Ն որոշմամբ հաստատված էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում:

Որոշման նախագծով էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը համապատասխանեցվում է «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի պահանջներին: Մասնավորապես, նախատեսվում են համապատասխան կարգավորումներ էներգետիկական շուկայի նոր մասնակիցների լիցենզավորման ընթացակարգերի վերաբերյալ, հստակեցվում է լիցենզիա ստանալու համար հանձնաժողով ներկայացվող փաստաթղթերի ցանկը: Հաշվի առնելով, որ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի համաձայն էլեկտրական էներգիայի ներկրումը և արտահանումը այսուհետ իրականացվելու է առանց ներկրման կամ արտահանման լիցենզիա ստանալու՝ լիցենզավորման կարգից հանվում են նաև դրանց վերաբերյալ կարգավորումները: Միևնույն ժամանակ մեկ միասնական կարգում են ներառվում նաև բնական գազի ներկրման և արտահանման գործունեության լիցենզավորման գործընթացները:

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N344Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ.

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N344Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների 196-

րդ կետի համաձայն՝ սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարման գործընթացի շրջանակում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն կարող է սպառողներից հավաքագրված գումարների գրավադրման ընթացքում հատուկ հաշվից վճարումներ կատարել նաև ներքին շուկայում վաճառելու նպատակով այլ անձանցից գնված էլեկտրական էներգիայի դիմաց: Միաժամանակ, կանոնների 197-րդ կետով վերը նշված դեպքի համար «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հատուկ հաշվից դրամական միջոցների ելքի ռեժիմ նախատեսված չէ: Ուստի, առկա է այդ հարաբերությունների մասով Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի ժամանակավոր առևտրային կանոնների լրամշակման անհրաժեշտություն:

Նախագծի ընդունումը կնպաստի սպառված էլեկտրաէներգիայի դիմաց սպառողներից գումարների հավաքագրման և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից էլեկտրաէներգետիկական համակարգի արտադրող կայաններին և ծառայություններ մատուցող ընկերություններին վճարումների կատարման գործընթացի առավել արդյունավետ կանոնակարգմանը:

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ.

Որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների հետագա կատարելագործմամբ և հստակեցմամբ:

Կանոնների լրամշակման արդյունքում ակնկալվում է՝

ա. Սպառողին ներկայացվող վճարման փաստաթղթում կներառվի սպառողի համար ավելի ծավալուն տեղեկատվություն, որի շնորհիվ վերջինիս համար ավելի վերահսկելի կդառնա սպառված էլեկտրաէներգիայի քանակի և արժեքի չափը.

բ. Առևտրային հաշվառքի սարքերի խախտման դեպքերում կհստակեցվի սպառողի կողմից ծախսված էլեկտրական էներգիայի վերահաշվարկի բանաձևը, իսկ սպառված էլեկտրաէներգիայի արժեքի որոշումը կիրականացվի ավելի ճշգրիտ՝ տարանջատված ըստ ցերեկային և գիշերային սակագնի.

գ. Սպառողի հարմարավետության և սպառողին ամրակցված հաշվառքի սարքի աշխատանքի վերահսկման նպատակով, մատակարարը կպարտավորեցվի առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում սպառողին ներկայացնել Չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության պատճենը:

«Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշման նախագիծ.

Ներկայում խմելու ջրի ոլորտում մատակարարի ջրամատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործման հետ կապված հարցերը կանոնակարգված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հունվարի 22-ի №130Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և խմելու ջուրը ոռոգման նպատակով օգտագործման կարգավորման, խմելու ջրի մատակարարման համակարգերից խմելու ջրի ապօրինի սպառումը և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործումն արձանագրելու մասին» N658Ն որոշմամբ: Նշված որոշմամբ սահմանված է, որ խմելու ջրի ապօրինի սպառում և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) համակարգերի ապօրինի օգտագործում հայտնաբերվելու դեպքում մատակարարն արձանագրում է փաստը, համապատասխան հաշվարկների միջոցով հաշվարկում է ապօրինի օգտագործված ծառայությունների քանակները ու դրանց դիմաց վճարման ենթակա գումարները և ապօրինի միացում կատարած անձի հաշվին դադարեցնում է ծառայությունների ապօրինի օգտագործումը: Նշված իրավակարգավորումը հանգեցնում է նրան, որ ապօրինություն կատարած անձը մինչև նոր միացմամբ բաժանորդ դառնալը զրկվում է կենսական անհրաժեշտություն ունեցող ծառայություններից:

Բաժանորդին մատուցած ծառայությունների դիմաց տրվող վճարման փաստաթղթի մասով կարգավորումները սահմանված են Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները սահմանելու մասին» N378Ն որոշմամբ: Այս դեպքում բաժանորդին վճարման փաստաթղթի միջոցով տրամադրվող տեղեկատվության համար սահմանված պահանջներն համեմատաբար քիչ են և ամփոփ՝ բացակայում են սակագները, մատուցվող ծառայությունների քանակները և դրանց դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ սուբսիդիայի առկայության դեպքում՝ նաև յուրաքանչյուր հաշվարկային ամսվա համար հաշվարկվող սուբսիդիայի գումարներն ըստ ծառայությունների տեսակների տարանջատված ներկայացնելու պահանջները:

Նախագծի նպատակն է որոշակի ժամանակահատվածով հնարավորություն ընձեռել ապօրինություն կատարած անձին նոր միացմամբ բաժանորդ դառնալու՝ առանց ծառայությունների օգտագործման դադարեցման, ինչպես նաև բաժանորդին մատուցած ծառայությունների դիմաց տրվող վճարման փաստաթղթի միջոցով հնարավորինս շատ և մանրամասն տեղեկատվություն տրամադրելը (նախագծով նախատեսվում է 2019 թվականի հունվարի 1-ից բաժանորդին մատուցած ծառայությունների դիմաց տրվող վճարման փաստաթղթում ըստ մատուցված ծառայությունների տեսակի տարանջատված ներառել հաշվարկային ամսում մատուցված ծառայությունների սակագների, քանակների և դրանց դիմաց վճարման ենթակա գումարների, իսկ սուբսիդիայի առկայության դեպքում՝ նաև յուրաքանչյուր հաշվարկային ամսվա համար հաշվարկված սուբսիդիաների գումարների վերաբերյալ տեղեկատվություն):

«Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ.

Նախագծի ընդունմամբ համապարփակ կերպով կկարգավորվեն ջրահեռացման իրավահարաբերությունները, ինչպես նաև կսահմանվեն կեղտաջրերի և ջրահեռացման համակարգերի տեսակները և ըստ տեսակների՝ կեղտաջրերի հեռացմանը, մաքրմանը և մոնիտորինգին ներկայացվող պահանջները:

Որոշակի պայմանների առկայության դեպքում, արտադրական կեղտաջուր արտանետողների նկատմամբ սահմանվել է կեղտաջրերի նախնական մաքրման պահանջ: Այդ գործընթացների նկատմամբ վերահսկողությունը իրականացնելու համար սահմանվել է արտադրական կեղտաջրերի մոնիտորինգի գործառույթ, որը վերապահվել է միասնական օպերատորի սպասարկման տարածքներում՝ միասնական օպերատորին, իսկ սպասարկման տարածքից դուրս՝ արտանետողներին՝ մասնագիտացված կազմակերպությունների միջոցով իրականացնելու համար: Միասնական օպերատորի կողմից սպասարկման տարածքում այս ֆունկցիան վերապահվել է օպերատորին մոնիտորինգի ծախսերը նվազեցնելու նպատակով, քանի որ այն կարող է համատեղվել սպառված ջրի ցուցմունքի գրանցման գործընթացի հետ:

Ներկայացվող նախագծով իրավական հենք կստեղծվի Հայաստանի Հանրապետության տարածքում բոլոր արտադրական կեղտաջուր արտանետողների վերաբերյալ համապարփակ տեղեկատվություն հավաքագրելու և պետական ջրային կադաստրում ներառելու համար, մասնավորապես կազմակերպության գործունեության տեսակը, թույլատրված արտահոսքի ծավալները, տվյալ արտադրական գործունեությանը բնորոշ կեղտաջրերի բաղադրությունը և այլ տեղեկատվություն, որը դյուրին կդարձնի ջրահեռացման ոլորտի արդյունավետ բնապահպանական վերահսկողության իրականացման համար: Տարբեր արտադրության ճյուղերի կեղտաջրերի վերաբերյալ տվյալների բազան զգալիորեն կդյուրինացնի մոնիտորինգի իրականացման գործընթացը, քանի որ հստակ կսահմանվեն այն «վտանգավոր» աղտոտիչների ցանկը, որոնց նախնական մաքրման համար պարտադիր պահանջ պետք է ներկայացվի, ինչպես նաև դրանց քանակական սահմանաչափերը կվերահսկվեն դեպի ցանց կամ շրջակա միջավայր արտահոսքի դեպքում:

Ջրահեռացման ոլորտում ներդրումների խթանման նպատակով, հատկապես միասնական օպերատորի սպասարկման տարածքում չընդգրկված համայնքների ջրահեռացումը բարելավելու տեսանկյունից նախատեսվում է տարանջատել ջրամատակարման և ջրահեռացման ծառայությունները, ներառյալ՝ ջրահեռացման ծառայությունը կեղտաջրերի հեռացման և կեղտաջրերի մաքրման տարանջատումը, որպես առանձին ծառայությունների տեսակներ՝ Հայաստանի Հանրապետության Հանրային Ծառայությունները Կարգավորող Հանձնաժողովի իրավասությունների, այդ թվում նրա կողմից լիցենզիայի տրամադրման ոլորտում, քանի որ այդ ծառայությունները կարող են իրականացնել տարբեր սուբյեկտներ: Բացի այդ, սահմանվել է, որ կեղտաջրի կամ նստվածքի/տիղմի վաճառքի կամ դրանց օգտահանումից առաջացած ռեսուրսների վաճառքի դեպքում լիցենզիա անհրաժեշտ չէ:

Նպաստավոր նախադրյալներ կստեղծվեն պետություն-մասնավոր հատված գործընկերության (ՊՄԳ) շրջանակներում մասնավոր ներդրողների, ինչպես նաև

միջազգային ֆինանսական կազմակերպությունների և դոնորների կողմից ոլորտում ներդրումներ կատարելու ուղղությամբ:

Նախագծով խրախուսվում է կեղտաջրերի կրկնակի (երկրորդային) օգտագործումը օրենսդրությամբ թույլատրելի բոլոր նպատակներով, եթե դրանք կհամապատասխանեն նպատակային ջրօգտագործման որակական պահանջներին: Բացի այդ բնապահպանական հարկը խթանող նորմերը ընդգրկում են տնտեսական գործունեության բոլոր ոլորտները, ի տարբերություն ներկայումս գործող միայն ձկնաբուծության և խեցգետնաբուծության ոլորտի:

Միևնույն ժամանակ սահմանվում է ոռոգման ջրի որակի ստանդարտները հաստատելու անհրաժեշտությունը՝ կեղտաջրերի օգտագործումը ոռոգման նպատակով կանոնակարգելու համար: Դրանով մաքրված կեղտաջուրը դիտարկվում է որպես ջրային ռեսուրս:

Նախագծով նորմեր են նախատեսված նաև համայնքների համար՝ տեղական ենթակառուցվածքներ ստեղծելու պարտականության ուղղությամբ, մասնավորապես համայնքները պարտավոր են ունենալ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման պահանջներին համապատասխանող բնակավայրերի կեղտաջրերի հեռացման և կեղտաջրերի մաքրման համակարգեր, որն ուժի մեջ կմտնի 3 տարի հետո: Այս իրավական նորմի նպատակը ենթակառուցվածքների հետագա զարգացման ուղղության մշակումն է և դրա իրականացման տեսլականը և կանոնակարգումը, որից հետո հստակ կարող է սահմանվել համայնքների նկատմամբ պարտականության սահմանման ժամանակացույցը:

2. Հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների ու շահերի պաշտպանությանն առնչվող միջազգային փորձը

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ միջազգային պայմանագրերն ուժի մեջ են մտնում միայն վավերացվելուց կամ հաստատվելուց հետո: Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը: Սահմանադրությանը հակասող միջազգային պայմանագրերը չեն կարող վավերացվել:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 6-րդ հոդվածով նախատեսվում է, որ միջազգային պայմանագրերը կիրառվում են անմիջականորեն, բացի այն դեպքերից, երբ միջազգային պայմանագրից բխում է, որ դրա կիրառման համար պահանջվում է ներպետական ակտի հրատարակում: Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

ՀՀ ջրային օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են նույն օրենսգրքում, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 57-րդ հոդվածում ամրագրված է, որ եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են նույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Նույնը սահմանված է նաև «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքների 3-րդ հոդվածներով, «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով, «Երկաթուղային տրանսպորտի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով:

«Սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության հիմնական ուղղությունների մասին» 2000 թվականի հունվարի 25-ի համաձայնագրի 2-րդ հոդվածով հռչակվել է, որ Համաձայնագրի նպատակը սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում համաձայնեցված քաղաքականության իրականացման ուղղությամբ Կողմերի համագործակցության իրավական և կազմակերպչական հիմքերի ստեղծումն է՝ ուղղված համագործակցության՝ նույն Համաձայնագրին մասնակից պետությունների քաղաքացիների համար, նրանց շահերը այդ պետությունների տարածքներում գործող տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ գործունեությունից պաշտպանելու նպատակով, հավասար պայմանների ձևավորմանը:

Համաձայնագրի 3-րդ հոդվածի համաձայն՝ սպառողների իրավունքները և դրանց պաշտպանությունը երաշխավորվում է սպառողների իրավունքների պաշտպանության ազգային օրենսդրությամբ, ինչպես նաև նույն Համաձայնագրով: ԱՊՀ մասնակից յուրաքանչյուր պետության քաղաքացիները, ինչպես նաև տվյալ պետության տարածքում բնակվող այլ անձինք Համաձայնագրին միացած Համագործակցության այլ պետությունների տարածքներում, իրենց սպառողական իրավունքների հետ կապված՝ օգտվում են նույն իրավական պաշտպանությունից, ինչ տվյալ պետության քաղաքացիները և իրավունք ունեն դիմել սպառողների իրավունքների պաշտպանության պետական, հասարակական և այլ կազմակերպություններին, ներկայացնել հայց դատարաններ և իրականացնել այլ դատավարական գործողություններ նույն պայմաններով, ինչ այդ պետության քաղաքացիները:

Համաձայնագրի 4-րդ հոդվածով ամրագրվել է, որ կողմերը համագործակցում են հետևյալ ուղղություններով.

- սպառողներին, պետական մարմիններին և սպառողների հասարակական միավորումներին ապրանքների (աշխատանքների, ծառայությունների), արտադրողների (վաճառողների, կատարողների) մասին օպերատիվ և ճշգրիտ տեղեկատվության ապահովում,

Համաձայնագրի մասնակից պետությունների տարածքներում անբարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների գործունեությունը և անորակ ապրանքների (ծառայությունների) ներթափանցումը շուկա կանխելու ուղղությամբ միջոցների ձեռնարկում.

• բարեխիղճ մրցակցության զարգացման ճանապարհով սպառողի համար ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ազատ ընտրությանը նպաստող պայմանների ստեղծում,

• սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում լուսաբանման ծրագրերի իրականացում՝ որպես պետական կրթական համակարգում քաղաքացիների ոսուցման անբաժանելի մաս,

• զանգվածային լրատվության միջոցների, այդ թվում՝ հեռուստատեսության և ռադիոյի ներգրավումը սպառողների իրավունքների պաշտպանության հարցերի քարոզչության և մշտական լուսաբանման աշխատանքներին:

Հայաստանի Հանրապետության կողմից «**Համապարփակված և ընդլայնված գործընկերության համաձայնագիր»** է կնքել Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների հետ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը մշտապես համագործակցում է միջազգային կազմակերպությունների և այլ երկրների կարգավորող մարմինների հետ:

Մասնավորապես, հանրային ծառայությունների կարգավորման ոլորտում միջազգային լավագույն փորձն ուսումնասիրելու և Հայաստանի Հանրապետությունում այն կիրառելու կամ կիրառման հնարավորությունները դիտարկելու նպատակով հանձնաժողովը համագործակցում է Համաշխարհային բանկի, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Ասիական զարգացման բանկի, ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID), ԱՄՆ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովների անդամների ազգային ասոցիացիայի (NARUC), Հեռահաղորդակցության միջազգային միության (ITU), ԵՄ համապատասխան կառույցների, մասնավորապես՝ ԵՄ Արևելյան գործընկերության երկրների էլեկտրոնային հաղորդակցության կարգավորող մարմինների խմբի (EaPeReg), Էներգետիկ համայնքի քարտուղարության, Սևծովյան տարածաշրջանային կարգավորման նախաձեռնության (BSRI), Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA), Ջրային համակարգի միջազգային ասոցիացիայի (IWA) և Ջրի եվրոպական կարգավորողների կազմակերպության (WAREG) հետ:

Հանձնաժողովը, հանդիսանալով Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) հիմնադիր անդամ, ունի որոշակի պարտականություններ, ներառյալ մասնակցությունը տարեկան ընդհանուր ժողովներին և նախագահների ժողովներին, սակագնային և գնագոյացման, լիցենզավորման և մրցակցության կոմիտեների, բաժանորդների և մանրածախ շուկաների աշխատանքային խմբի նիստերին:

Սպառողների իրավունքների պաշտպանության բնագավառում ԱՊՀ անդամ պետությունների փորձի վերլուծությունը վկայում է, որ հիշյալ պետությունների՝ բարեկեցության ապահովմանը միտված, քաղաքականության ձևավորման և իրականացման ուղղությամբ կատարվել են էական քայլեր, ընդունվել են բազմաթիվ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր, որոնցով կանոնակարգվել են ծագող

իրավահարաբերությունների ներքոհիշյալ մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները.

- քաղաքացիներ՝ ծառայությունների սպառողներ,
- կազմակերպություններ՝ ծառայություններ մատուցողներ,
- պետություն՝ իրավահարաբերությունները կարգավորողներ և վերահսկողներ:

Մասնավորապես, Ռուսաստանի Դաշնությունում և Բելառուսի Հանրապետությունում պետություններն իրականացնում են վերահսկողական գործառույթներ, որոնք միտված են ծառայությունների որակի ապահովմանը և ոլորտում մրցակցության բացառմանը: Ազգաբնակչության սոցիալական բեռը մեղմելու նպատակով կիրառվում է սուբսիդիաների հատկացման ինստիտուտը:

Ուզբեկստանի Հանրապետությունում «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» օրենքի հիման վրա կառավարության կողմից ընդունվել է «Սպառողների իրավունքների պաշտպանությանը հասարակության մասնակցության ընդլայնման մասին» որոշում, որով ստեղծվել են սպառողների իրավունքների պաշտպանության (այդ թվում՝ կոմունալ ծառայությունների համապատասխան ծավալի և որակի նկատմամբ վերահսկողության) միջգերատեսչական խորհուրդ և տարածքային միավորումներ:

Պետական սպառողական քաղաքականության կատարելագործման, սպառողների իրավունքների և օրինական շահերի ապահովման նպատակով Ղազախստանի Հանրապետությունում մշակվել է հայեցակարգ, որի նպատակն է իրավական բազայի ձևավորման հիմնական ուղղությունների, սուբյեկտների իրավահարաբերություններում իրավունքների և պարտականությունների, փոխադարձ պատասխանատվության որոշումը:

Վերլուծությունները վկայում են, որ ԱՊՀ անդամ պետություններում ևս հաճախակի են սպառողների իրավունքների խախտման դեպքերը, ինչի հիման վրա գրեթե բոլոր պետություններում էլ հատուկ ուշադրություն է դարձվում այնպիսի ուղղությունների, ինչպիսիք են՝

1) օրենսդրական և նորմատիվային բազայի կատարելագործումը,
2) հասարակական կազմակերպությունների և միավորումների ակտիվ ներգրավումը սպառողների իրավունքների պաշտպանության և հանրային ծառայությունների ոլորտի կարգավորման գործընթացներին,
3) ընթացող գործընթացների մասին հանրային կարծիքի պարբերական ուսումնասիրությունները,
4) բնակչությանը լայն իրազեկումը:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Հանրային ծառայությունների ոլորտում Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ներկայացված բողոքներում բարձրացված խնդիրների առավել արդյունավետ լուծման նպատակով սերտ համագործակցություն է ձևավորվել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Պաշտպանի աշխատակազմի միջև, ինչի արդյունքում ձևավորվել է աշխատանքային խումբ, որտեղ արդեն իսկ քննարկվել են ջրամատակարարաման, ջրի սակագնի բարձրացման, գազամատակարարման, էներգամատակարարման, առևտրային հաշվառքի սարքերի ստուգաչափումների արդյունքներում իրականացված վերահաշվարկների արդյունքների վերաբերյալ դիմումատուների անհամաձայնության հետ կապված խնդիրները: Նշված համագործակցության շնորհիվ է, որ քաղաքացիների ներկայացրած խնդիրներին հիմնականում տրվել է դրական լուծում:

Օրինակ՝ վերականգնվել է Պաշտպանին դիմած անձանց բնակարանների էներգամատակարարումը, գազամատակարարումը և ջրամատակարարումը: Բացի այդ, գազամատակարարում ապահովող ընկերությունը սեփական միջոցներով իրականացրել է գազամատակարարման խողովակի տեղափոխման աշխատանքները, ինչպես նաև քաղաքացու բնակարանում տեղադրել է գազի ազդանշանային սարք, որը մինչ այդ չէր տեղադրում:

2017 թվականի ընթացքում Պաշտպանին հասցեագրվել են բողոքներ այն մասին, որ բնակելի տների առևտրային հաշվառքի սարքերի (գազահաշվիչ) աշխատանքը ճշտելու նպատակով անձինք դիմել են «Գազպրոմ Արմենիա» ՓԲ ընկերությանը, ինչի արդյունքում իրականացվել է առևտրային հաշվառքի սարքերի փոխարինում: Հետագայում գազամատակարարումն ապահովող ընկերության ծանուցման մեջ նշվել է, որ չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքերի վրա որևէ անձի ներգործությամբ իրականացվել է արտաքին միջամտություն, ինչի հետևանքով ընկերության կողմից իրականացվել է գազի ծախսի վերահաշվարկ: Ներկայացված արդյունքների վերաբերյալ քաղաքացիները հայտնել են իրենց անհամաձայնությունը:

Հաշվի առնելով, որ խնդիրը զանգվածային նշանակության է՝ Պաշտպանի կողմից սկսվել է քննարկման ընթացակարգ: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի պարզաբանումների համաձայն՝ ընկերության կատարած բնական գազի քանակի և արժեքի վերահաշվարկը կատարվել է առևտրային հաշվառքի սարքերի խախտման պատճառով (որը փաստվել է չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ) բաժանորդների կողմից ծախսված, բայց չհաշվառված գազի քանակի համար: Ըստ հանձնաժողովի՝ իրականացված գործողությունները համապատասխանում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-

ի №95Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 4.9. կետի և 4.13 կետի «ա» ենթակետով սահմանված պահանջներին:

Հարկ է նշել, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու մասին» 2005 թվականի հուլիսի 8-ի N95 Ն որոշման 4.1 կետի համաձայն՝ բազմաբնակարան շենքերի բնակիչների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց բնակարաններից դուրս: Առանձնատների և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց սեփականության տարածքից դուրս: Ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման կետը սահմանվում է միացման պայմանագրով, որը ամրագրվում է նաև պայմանագրում:

Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ առկա չէ հսկիչ հաշվառքի սարք, չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ փաստվել է, որ բացակայում են կամ կեղծված են, կամ վնասված են առևտրային հաշվառքի սարքի կնիքները, կամ առևտրային հաշվառքի սարքի խախտումը պայմանավորված է եղել առևտրային հաշվառքի սարքի առանձին դետալների այնպիսի խափանումներով կամ վնասվածքներով, որոնք կարող էին պայմանավորված լինել միայն որևէ անձի ներգործությամբ, միևնույն ժամանակ, մատակարարի գնահատմամբ՝ հաշվի առնելով չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությունը, այն հանգեցրել է բաժանորդի ծախսած բնական գազի քանակի սխալ հաշվառման, ապա առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտումը ըստ մատակարարի պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով, և դա առևտրային հաշվառքի սարքի խախտման առաջին դեպքն է վերջին երկու տարիների ընթացքում, մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին համաձայնելու դեպքում մատակարարը հաշվարկված տույժը հաշվի է առնում վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Բաժանորդի կողմից մատակարարի տույժ վճարելու պահանջին չհամաձայնելու դեպքում մատակարարը վեճը լուծում է դատական կարգով: Մատակարարն իրավունք չունի տույժի չվճարման համար դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը մինչև վեճի վերջնական լուծումը:

Միևնույն բաժանորդի մոտ երկու տարվա ընթացքում առևտրային հաշվառքի սարքի 1-ից ավելի խախտում հայտնաբերելու դեպքում, երբ չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքերը ըստ մատակարարի՝ պայմանավորված են եղել բաժանորդի միտումնավոր գործողություններով, մատակարարն իրավունք ունի վերահաշվարկված գազի արժեքի կրկնապատիկի չափով հաշվարկելու տույժ և այն հաշվի առնել վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսվա համար բաժանորդին ներկայացվող հաշվարկային (վճարման) փաստաթղթում: Այդ դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝ հաշվարկած տույժը՝ կազմակերպությունների դեպքում սույն

կանոնների 6-րդ գլխով, իսկ բնակչության դեպքում՝ սույն կանոնների 8-րդ գլխով սահմանված կարգով չվճարելու համար: Մատակարարի հաշվարկած տույժին չհամաձայնելու դեպքում բաժանորդը վեճը լուծում է դատական կարգով:

Քննարկվող հարցի կապակցությամբ հանձնաժողովից ստացվել են տեղեկություններ այն մասին, որ մարդկային գործոնով պայմանավորված՝ բնական գազի առևտրային հաշվառքի սարքի խախտման վերաբերյալ, որը հանգեցրել է բաժանորդի ծախսած բնական գազի քանակի սխալ հաշվառման, ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում 2017 թվականին մուտքագրվել է 49 գրավոր բողոք, որից 5-ի դեպքում մատակարարը ճշգրտելով՝ նվազեցրել կամ հրաժարվել է վերահաշվարկված գազի արժեքի պահանջից, իսկ մեկ դեպքում վերահաշվարկված գազի արժեքը կազմող գումարի բռնագանձման պահանջով գազամատակարարումն ապահովող ընկերությունը դիմել է դատարան: Մնացած 43 դեպքերում ընկերության կողմից կատարված բնական գազի քանակի և արժեքի վերահաշվարկը կատարվել է առևտրային հաշվառքի սարքի խախտման պատճառով (որը փաստվել է չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացությամբ) սպառողի կողմից ծախսված, բայց չհաշվառված գազի քանակի համար, ինչի մասին հանձնաժողովը հավաստիացել է իր իրավասության շրջանակներում մատակարարի կողմից ներկայացված պարզաբանումների ուսումնասիրման արդյունքում և հայտնել իր դիրքորոշումն առ այն, որ կատարված վերահաշվարկները համապատասխանում են ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի № 95Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 4.9 կետի և 4.13 կետի «ա» ենթակետով սահմանված պահանջներին:

Սակայն անհրաժեշտ է արձանագրել, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ բազմաբնակարան շենքերի և առանձնատների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են բաժանորդի սեփականության տարածքից դուրս: Արդյունքում՝ ֆիզիկական ներգործության միջոցով գազահաշվիչի խափանման կամ վնասման դեպքում պատասխանատվությունն առանց մեղքի ապացուցման դրվում է միայն բաժանորդի վրա:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից առաջարկվել է փոփոխության ենթարկել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի թիվ 95-Ն որոշումը, ապահովելու համար առևտրային հաշվառքի սարքերը բաժանորդների սեփականության և վերահսկողության տարածք տեղափոխելու հարցը:

2. Հանրային ծառայությունների ոլորտում արձանագրված խնդիրները

Ըստ սպառողներից ստացված բողոքների, հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության հետ կապված խնդիրների դասակարգումը կարելի է բաժանել պայմանական 3 խմբի՝

1. Սպառողների հետ պայմանագրերի կնքման ընթացքում հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների կողմից օրենսդրության պահանջների ոչ ճշգրիտ պահպանումը և այդ ընթացքում սպառողներին ծառայությունների մատուցման սեփական պայմանների թելադրումը:

Վկայակոչվում են փաստարկներ, թե ծառայություններ մատուցող կազմակերպությունները (հիմնականում էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման, ջրամատակարարման) տարբեր պատճառաբանություններով հրաժարվում են պայմանագրեր կնքելուց կամ պարտադրում են կնքել նաև լրացուցիչ պայմանագրեր (օրինակ՝ գազի սպասարկման), պայմանագրերում ներառում են սպառողների իրավունքները ոտնահարող դրույթներ:

2. Մատուցվող ծառայությունների ոչ պատշաճ որակը և գնի անհիմն լինելը:

Վկայակոչվում են փաստարկներ, թե կազմակերպությունների կողմից (հիմնականում էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման, ջրամատակարարման) մատուցվող ծառայությունները տեխնիկական չափորոշիչներին չհամապատասխանող որակի է, բացի այդ, մատակարարումը կատարվում է անհիմն ընդհատումներով: Մատուցվող ծառայությունների արժեքը հիմնավորված չէ, զգալիորեն գերազանցում է ինքնարժեքին և սպառողների իրավունքների ու շահերի ոտնահարմամբ մատակարարների համար ապահովում գերշահույթներ:

3. Ծառայությունների մատուցման հետ կապված վեճերի անհեռանկարությունը:

Վկայակոչվում են փաստարկներ, թե մատուցվող ծառայությունների հետ կապված բողոքները ժամանակատար և ծախսատար են, ինչի արդյունքում սպառողները, զրկված լինելով այլ մատակարարներից նույնպիսի ծառայություններ ստանալու հնարավորությունից, պարտադրված համաձայնվում են հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների պայմաններին և չեն դիմում վերջիններիս գործողության (կամ անգործության) բողոքարկման գործընթացների:

Ըստ սպառողներից ստացված դժգոհությունների, հանրային ծառայությունների ոլորտում սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության հետ կապված խնդիրներն առավելապես վերաբերում են ջրամատակարարման, գազամատակարարման, և էլեկտրամատակարարման ոլորտներին:

Սպառողների համար առավել հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ տեղեկությունները.

• **Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերին միացումների ընթացակարգեր՝** ՀԾԿՀ-ի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշմամբ հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների 10-րդ, 11-րդ և 15-րդ կետերի համաձայն՝ նոր համակարգը, դիմող անձի հայեցողությամբ, կառուցում է մատակարարը կամ դիմող անձը: Նոր համակարգը, բացառությամբ առևտրային հաշվառքի սարքի ձեռքբերման և տեղակայման, կառուցվում է դիմող անձի հաշվին: Նոր համակարգի կառուցումը և Հայաստանի Հանրապետությանը դրա սեփականության իրավունքի անհատույց հանձնումը իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Բնակիչ-բաժանորդի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միացման համար անհրաժեշտ են հետևյալ փաստաթղթերը.

– անձը հաստատող փաստաթղթի պատճենը, իսկ լիազորված անձի դեպքում՝ անձը հաստատող փաստաթղթի պատճենը և լիազորագիրը,

– տարածքի (շենքի, շինության) նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթի պատճենը կամ համայնքի, իսկ Երևան քաղաքում՝ նաև վարչական շրջանի ղեկավարի կողմից տրված՝ տվյալ տարածքում (շենքում, շինությունում) բնակության փաստը հավաստող փաստաթուղթ,

– կառուցվող (կառուցված) օբյեկտի տեղադիրքը ցույց տվող սխեմատիկ հատակագծի կամ հաստատված գլխավոր հատակագծի պատճենը,

– տեխնիկական պայմանների և խոշորացված նախահաշվի կազմման համար 2000 դրամի վճարումը հավաստող փաստաթղթի պատճենը:

Մատակարարի կողմից նոր համակարգը կառուցվում է միացման պայմանագրի հիման վրա: Մատակարարը դիմող անձից նոր միացման համար գանձում է միացման վճար: Միացման վճարի մեծությունը հավասար է մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգին միացման աշխատանքների իրականացման նպատակով մատակարարի կողմից դիմող անձի հետ համաձայնեցված աշխատանքների խոշորացված նախահաշվի գնին և ճշգրտվում է աշխատանքների փաստացի ավարտից հետո՝ միացման պայմանագրով սահմանված կարգով:

• **Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի շրջանցմամբ միացումների հայտնաբերման դեպքում մատակարարի հնարավոր գործողությունները՝** Կանոնների 49, 49.1, 49.2. և 49.3-րդ կետերի համաձայն՝ բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի շրջանցման (այդ թվում՝ բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման) դեպքում մատակարարը կազմում է խախտման մասին արձանագրություն և իրականացնում բաժանորդին մատուցված ծառայության քանակի վերահաշվարկ համապատասխանաբար ներանցման խողովակի կամ շրջանցմամբ միացված ներանցման խողովակի թողունակությամբ՝ շարժման 1,5 մ/վրկ արագությամբ և ջրամատակարարման հրապարակված գրաֆիկով՝ բազմաբնակարան շենքի բնակիչ բաժանորդի դեպքում՝ 15 օրվա, ոչ բազմաբնակարան շենքի բնակիչ բաժանորդի դեպքում՝ 30 օրվա, իսկ ոչ բնակիչ բաժանորդի դեպքում 90 օրվա համար, բացառությամբ այն դեպքի, երբ սույն կետով սահմանված ժամանակահատվածներից կարճ ժամանակահատվածով է բաժանորդ հանդիսացել, որի ժամանակ վերահաշվարկը կատարվում է բաժանորդ հանդիսացած ժամանակահատվածի համար, ընդ որում՝ միևնույն բաժանորդի մոտ առևտրային հաշվառքի սարքի շրջանցման (այդ թվում՝ բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման) դեպքի հայտնաբերման օրվանից երկու տարվա ընթացքում կրկին նշված խախտումը հայտնաբերելու դեպքում մատակարարը իրավունք ունի բաժանորդին մատուցված ծառայությունների քանակը վերահաշվարկել վերոնշյալ չափաքանակների կրկնապատիկի չափով: Առևտրային հաշվառքի սարքի շրջանցման դեպքում խմելու ջրի վերահաշվարկված քանակը և դրա դիմաց վճարման ենթակա գումարը մատակարարն առանձին տողով հաշվի է առնում բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց վերահաշվարկի կատարմանը հաջորդող հաշվարկային ամսում ներկայացվելիք հաշվարկային փաստաթղթում և ավելացնում բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց վճարման ենթակա գումարին կամ ներկայացնում ճշգրտող հաշվարկային փաստաթուղթ:

• **Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բաժանորդի առևտրային հաշվառքի սարքն ապահավաքակցելու կարգը՝** Կանոնների 35-րդ կետի համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման դեպքում մատակարարը՝

- արտաքին զննության արդյունքում կազմում է առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի, առևտրային հաշվառքի սարքի խախտված լինելու մասին արձանագրություն, որը ստորագրում են մատակարարը և բաժանորդը կամ նրա ներկայացուցիչը: Բաժանորդի չներկայանալու կամ արձանագրությունը ստորագրելուց հրաժարվելու, կամ արձանագրության որևէ դրույթին չհամաձայնելու դեպքում այդ մասին մատակարարը արձանագրությունում կատարում է համապատասխան նշում՝ նկարագրելով պատճառները: Բաժանորդի չներկայանալու դեպքում մատակարարն արձանագրությանը կցում է բաժանորդին ծանուցելու մասին գրությունը: Արձանագրությունը կազմվում է երկու օրինակից՝ մեկական յուրաքանչյուր կողմի համար.

- իր հաշվին տեղակայում է առևտրային հաշվառքի սարք, որի նույնականացման տվյալներն ամրագրվում են պայմանագրում և որը հանդիսանում է մատակարարի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի մաս: Բաժանորդի սեփականություն հանդիսացող ապահավաքակցված առևտրային հաշվառքի սարքը ստուգաչափումից հետո վերադարձվում է բաժանորդին՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում:

• **Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի բաժանորդի պարտավորությունները ներքին ցանցը ներառող տարածքը օտարելու դեպքում՝** Կանոնների 8-րդ կետի համաձայն՝ բաժանորդը իր ներքին ցանցը ներառող տարածքը օտարելու դեպքում պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել մատակարարին՝ պայմանագիրը լուծելու համար:

• **Մատակարարի կողմից բաժանորդին վճարվող տուժանք՝** Կանոնների 56-րդ կետի համաձայն՝ մատակարարը բաժանորդին վճարում է տուժանք՝ բաժանորդին մատուցված ծառայությունների դիմաց հաշվարկված միջին ամսական գումարի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան 2000 դրամը, հետևյալ դեպքերում.

- առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման, տեղակայման և ստուգաչափման կարգի ու ժամկետների խախտման համար.

- մատուցված ծառայությունների քանակների և դրանց դիմաց վճարման ենթակա գումարի հաշվարկման ու վերահաշվարկման և վճարման կարգի ու ժամկետների խախտման համար.

- ջրամատակարարման ընդհատման և ծառայությունների մատուցման դադարեցման կարգի ու ժամկետների խախտման, այդ թվում՝ կանոնների 68-րդ կետով սահմանված ժամկետների գերազանցման համար.

- դիմումի ներկայացման և քննարկման կարգի ու ժամկետների խախտման համար:

• **Մատակարարի կողմից բաժանորդին ծառայությունների մատուցման դադարեցման կարգը՝** Կանոնների 74-րդ կետի համաձայն՝ մատակարարն իրավունք ունի առնվազն մեկ օր առաջ տեղեկացնելով՝ դադարեցնել բաժանորդին ծառայությունների մատուցումը ՝

- մատուցված ծառայությունների կամ մատուցված ծառայության վերահաշվարկված քանակի դիմաց վճարման ենթակա գումարի կամ հաշվարկված տուժանքի չվճարման

դեպքում մատակարարի կողմից գրավոր կամ էլեկտրոնային եղանակով կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով բաժանորդին զգուշացնելու պահից սկսած 3 օրվա ընթացքում կրկին չվճարելու դեպքում,

- մատակարարի ներկայացուցչին առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցման կամ ապահավաքակցման նպատակով իր սեփականություն հանդիսացող կամ այլ իրավական հիմքով տիրապետվող տարածք մուտք գործել թույլ չտալու կամ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը չհաղորդելու դեպքում:

• **Բաժանորդի կողմից ներկայացվող դիմումների պատասխանը՝** Կանոնների 83-րդ և 85-րդ կետերի համաձայն՝ մատակարարը պարտավոր է ընդունել գրավոր կամ էլեկտրոնային եղանակով, կամ շուրջօրյա հեռախոսակապի միջոցով ներկայացված դիմումները և բաժանորդի դիմումին պատասխանել այն եղանակով, ինչ եղանակով ստացել է: Մատակարարը պարտավոր է դիմումին պատասխանել 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե Հայաստանի Հանրապետության օրենքներով այլ ժամկետ սահմանված չէ:

• **Էլեկտրաէներգետիկական համակարգի սպառող դառնալը՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշմամբ հաստատված էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների 13.2-րդ և 13.1.2-րդ կետերի համաձայն՝ նոր սպառման համակարգը էլեկտրական ցանցին միացվում է նոր սպառողի կամ կառուցապատողի, կամ սպառողի գրավոր դիմումի հիման վրա, կամ նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման համար անհրաժեշտ փաստաթղթերն էլեկտրոնային եղանակով ներկայացնելու կարգին համապատասխան: Մատակարարը պարտավոր է նոր սպառողի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանները տեղակայել մատակարարի բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներում՝ քաղաքացիների համար տեսանելի վայրում, և իր պաշտոնական կայքում: Դիմող անձի՝ էլեկտրական ցանցին միացման դիմումը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը և տեղեկատվությունը.

1) կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ անվանումը, ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը, գտնվելու վայրը, սպառման համակարգի միացման հասցեն, կազմակերպության ղեկավարի, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի կամ նրանց կողմից լիազորված անձի հեռախոսահամարը, կազմակերպության և անհատ ձեռնարկատիրոջ՝ հարկ վճարողի հաշվառման համարը, ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագիրը (պատճենահանելուց հետո վերադարձվում է): Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում ներկայացվում են նաև կազմակերպության ղեկավարի, անհատ ձեռնարկատիրոջ, ֆիզիկական անձի կամ նրանց կողմից լիազորված անձի անձնագիրը (պատճենահանելուց հետո վերադարձվում է) և էլեկտրոնային փոստի հասցեն,

2) պահանջվող հզորությունը (դրվածքային և օգտագործվող), լարման մակարդակը, միացման տեսակը (միաֆազ, եռաֆազ), սպառման տեսակը (կենցաղային, ոչ կենցաղային), ոչ կենցաղային սպառման դեպքում նաև համակարգի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև՝ Դիմող անձի հայեցողությամբ, էլեկտրամատակարարման պահուստային սնուցման ապահովման անհրաժեշտության մասին իր պահանջները,

3) 0.4 կվ և բարձր եռաֆազ լարման էլեկտրական ցանցին միանալու դեպքում՝ էլեկտրամատակարարման համակարգի էսքիզը կամ տարածքի հատակագիծը՝ նշելով նոր սպառման համակարգի միացման կետը կամ կետերը, սպառման տեսակը, իսկ բազմաբնակարան շենքերի համար նաև սպառման ներքին սխեման՝ նշելով էլեկտրաէներգիայի հաշվառման կետերը, շենքի հարկայնությունը, բնակարանների թիվը, շենքում տեղակայվող այլ սպառողների դրվածքային հզորությունը, շենքում տրամադրվող էլեկտրավահանակի և հաշվառքի սարքերի տեղադրման տեղերը,

4) էլեկտրամատակարարվող տարածքի (շենքի, շինության, հողամասի) նկատմամբ իր իրավունքները կամ իրավունքների ձեռքբերումը հավաստող (հաստատող) փաստաթղթերը, բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր օգտագործման տարածքների, այդ թվում ավտոկայանատեղիների և վերելակների, ինչպես նաև կանոններով մատակարարի իրավասությանը վերապահված դեպքերի:

• **Առևտրային հաշվառքի սարքերի շահագործման ընթացքում դրանց ամբողջականության պահպանման համար պատասխանատվությունը՝** կանոնների 20-րդ կետի համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքերի շահագործման ընթացքում դրանց ամբողջականության պահպանման ծախսերը և պահպանման պատասխանատվությունը կրում է սպառողը, եթե վերջինս բազմաբնակարան շենքում գտնվող սպառող չէ, առևտրային հաշվառքի սարքը տեղակայված է սպառողի սեփականությունը հանդիսացող կամ իր կողմից տնօրինվող տարածքներում և այդ մասին նշված է Պայմանագրում: Սույն կանոնների իմաստով սպառողի կողմից առևտրային հաշվառքի սարքի ամբողջականության պահպանումը նրա պահպանումն է արտաքին մեխանիկական վնասվածքներից: Սպառողը նման դեպքերում պատասխանատվություն չի կրում, եթե այդպիսի վնասվածքները առաջացել են սպառողի կամքից անկախ արտակարգ և անկանխելի դեպքերի և հանգամանքների արդյունքում:

• **Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգումը՝** Կանոնների 60-րդ կետի համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգումը կարող է իրականացվել ինչպես սպառողի գրավոր դիմումի հիման վրա, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ: Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտությունը որոշվում է Չափագիտական մարմնի կողմից հաստատված չափագիտական փորձաքննության եզրակացության հիման վրա՝ առևտրային հաշվառքի սարքի հերթական կամ արտահերթ ստուգաչափման ընթացքում:

• **Առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման դեպքում մատակարարի և սպառողի իրավունքներն ու պարտավորությունները՝** Կանոնների 62-րդ և 63-րդ կետերի համաձայն՝ մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման, աշխատանքի ճշտության ստուգման և ստուգաչափման ժամկետների մասին ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ գրավոր, հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ծանուցել սպառողին: Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվառքի սարքը ապահավաքակցել առանց սպառողին նախապես ծանուցելու, եթե հայտնաբերել է, որ սպառողն էլեկտրաէներգիան սպառում է առևտրային հաշվառքի սարքի ակնհայտ խախտմամբ կամ առևտրային հաշվառքի սարքի հետագա շահագործումը կարող է վնաս հասցնել մարդկանց կյանքին, առողջությանը,

գույքին կամ շրջակա միջավայրին: Նման դեպքում մատակարարը առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման մասին սպառողին պարտավոր է սույն կետում նշված եղանակներով ծանուցել անմիջապես՝ առաջին իսկ հնարավորության դեպքում, և ներկայացնել առևտրային հաշվառքի սարքի ակնհայտ խախտման իր հիմնավորումները: Մատակարարը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները մարդկանց կյանքին, առողջությանը, գույքին կամ շրջակա միջավայրին սպառնացող վտանգն անհապաղ վերացնելու նպատակով:

Սպառողն իրավունք ունի պահանջել, որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ՝ դրա ապահավաքակցումը, աշխատանքի ճշտության ստուգումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ նախապես փոխհամաձայնեցված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մատակարարի կողմից այդ մասին գրավոր, հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով ծանուցելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Սույնով սահմանված ժամկետում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը, աշխատանքի ճշտության ստուգմանը կամ ստուգաչափմանը սպառողի չներկայանալու դեպքում այդ աշխատանքներն իրականացվում են նրա բացակայությամբ:

• **Սպառողի էլեկտրամատակարարման դադարեցումը մատակարարի կողմից՝** Կանոնների 33-րդ կետի համաձայն՝ մատակարարն իրավունք ունի դադարեցնել սպառողի էլեկտրամատակարարումը՝

ա) սպառված էլեկտրաէներգիայի դիմաց կանոններով և պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով վճարումներ չկատարելու դեպքում.

բ) եթե մատակարարի անձնակազմին համապատասխան վկայականը ներկայացնելու դեպքում թույլ չի տրվել սպառողի հետ համաձայնեցված ժամանակացույցով կամ պայմանագրով սահմանված կարգով սպասարկել սպառողի տնօրինվող տարածքում տեղակայված էլեկտրատեղակայանքները, այդ թվում՝ էլեկտրաէներգիայի հաշվառքի սարքերը՝ անկախ դրանց պատկանելությունից.

գ) եթե սպառողը էլեկտրաէներգիան սպառել է առևտրային հաշվառքի սարքի միտումնավոր խախտումով կամ առանց առևտրային հաշվառքի սարքի, կամ առևտրային հաշվառքի սարքի շրջանցումով.

դ) կանոններով սահմանված կարգով էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման տեխնիկական պայմաններ ստացած նոր սպառողի էլեկտրամատակարարման տեխնիկական պայմաններում էլեկտրական ցանցին ժամանակավոր միացման համար սահմանված ժամկետի ավարտի դեպքում:

• **Սպառողի պարտքի առկայության դեպքում էլեկտրամատակարարման չդադարեցումը մատակարարի կողմից՝** Կանոնների 51-րդ կետի համաձայն՝ պարտքի առկայության դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի սպառողի էլեկտրամատակարարումը, եթե սպառողը ներկայացրել է մատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմվել է պարտքի մարման ժամանակացույց: Սույն դրույթը չի սահմանափակում մատակարարի իրավունքը պարտքի մարման ժամանակացույցի խախտման դեպքում սպառողի էլեկտրամատակարարումը

դադարեցնելու համար՝ սահմանված կարգով ապահովելով տվյալ սպառողի էլեկտրամատակարարման դադարեցման ընթացակարգերը:

• **Սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում մատակարարի կողմից սպառողի էլեկտրամատակարարման վերականգնումը՝** Կանոնների 52-րդ կետի համաձայն՝ սպառված էլեկտրաէներգիայի դիմաց վճարման համար հատկացված ժամկետի խախտման դեպքում, երբ մատակարարը դադարեցրել է սպառողի էլեկտրամատակարարումը, այն պարտավոր է վերականգնել ոչ ուշ, քան.

1) նույն օրը՝ մինչև ժամը 18:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել աշխատանքային օրերին մինչև ժամը 14:00-ն, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություն, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը,

2) հաջորդ օրը՝ մինչև ժամը 13:00-ն, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել աշխատանքային օրերին՝ ժամը 14:00-ից հետո, կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություն, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը,

3) պարտքի մարման մասին տեղեկանալու պահից 24 ժամվա ընթացքում, եթե սպառողը պարտքի վճարումը հավաստող փաստաթուղթը մատակարարին է ներկայացրել ոչ աշխատանքային օրերին կամ մատակարարը նույն ժամկետում այլ աղբյուրներից ստացել է հավաստի տեղեկություն, որ սպառողը կատարել է պարտքի վճարումը:

• **Վճարման փաստաթղթում հայտնաբերված սխալի կարգավորումը՝** Կանոնների 53-55-րդ կետերի համաձայն՝ վճարման փաստաթղթում սխալ հայտնաբերելու դեպքում, սխալը հայտնաբերած կողմը փաստի մասին գրավոր ծանուցում է մյուս կողմին: Ծանուցումն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում կողմն անհամաձայնության դեպքում մյուս կողմին գրավոր ներկայացնում է իր պարզաբանումները համապատասխան հիմնավորումներով: Վճարման փաստաթղթում սխալի փաստը հաստատվելու դեպքում մատակարարը սխալ հաշվարկված էլեկտրաէներգիայի արժեքը հաշվի է առնում (նվազեցնում կամ ավելացնում) հաջորդ հաշվարկային ամսում սպառողին ներկայացվող վճարման փաստաթղթում: Վճարման փաստաթղթի վերաբերյալ տարաձայնությունների դեպքում մատակարարը չպետք է դադարեցնի սպառողի էլեկտրամատակարարումը, եթե վերջինս վճարել է մատակարարված էլեկտրաէներգիայի՝ իր կողմից չվիճարկվող մասի արժեքը: Սպառողը պետք է ողջամտորեն հիմնավորի իր կողմից սպառված էլեկտրաէներգիայի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին:

• **Բաժանորդի գազի առևտրային հաշվառքի սարքի տեղադրումը՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի №95-Ն որոշմամբ հաստատված բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների 4.1-րդ կետի համաձայն՝ բազմաբնակարան շենքերի բնակիչների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի սարքերը տեղակայվում են նրանց բնակարաններից դուրս: Առանձնատների և կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների գազամատակարարման համար առևտրային հաշվառքի

սարքերը տեղակայվում են նրանց սեփականության տարածքից դուրս: Ոչ կենցաղային սպառում ունեցող կազմակերպությունների առևտրային հաշվառքի սարքերի տեղակայման կետը սահմանվում է միացման պայմանագրով, որը ամրագրվում է նաև Պայմանագրում:

• **Գազի առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցումը՝** Կանոնների 8.2-րդ կետի համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքը գրանցում է մատակարարը՝ տվյալ հաշվարկային ամսվա վերջին կամ հաջորդ ամսվա առաջին երկու աշխատանքային օրվա ընթացքում: Բնակիչ-բաժանորդներն իրավունք ունեն մասնակցել առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի գրանցմանը:

• **Սպառած գազի դիմաց վճարումը՝** Կանոնների 6.4-րդ կետի համաձայն՝ հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի համար մատակարարը բաժանորդին ներկայացնում է վճարման փաստաթուղթ: Կազմակերպությունը նախորդ հաշվարկային ամսում մատակարարված (վերահաշվարկված) գազի արժեքի համար պարտավոր է վճարումը կատարել մատակարարից վճարման փաստաթուղթն ստանալուց հետո 7 օրվա ընթացքում: Սույն կետը չի սահմանափակում մատակարարի իրավունքը՝ կազմակերպություններին վճարման փաստաթուղթ ներկայացնել բնակիչ-բաժանորդների համար սահմանված կարգով:

Կանոնների 8.4, 8.5 և 8.7-րդ կետերի համաձայն՝ սահմանված ժամկետում վճարում չկատարելու դեպքում մատակարարն իրավունք ունի դադարեցնել բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը՝ առնվազն 3 օր առաջ հեռուստատեսությամբ կամ բնակիչ-բաժանորդներին հասու այլ ձևերով (հայտարարություն փակցնելով շքամուտքերում, փոստային բաժանմունքներում և այլն) զգուշացնելուց հետո: Զգուշացումը հեռուստատեսությամբ պետք է իրականացվի հանրապետական սփռման առնվանզն մեկ հեռուստաընկերության միջոցով՝ երկու անգամ, 18:00-ից 20:00-ն և 20:00-ից 23:00-ն ընկած ժամանակահատվածներում: Մատակարարը բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը դադարեցնելուց անմիջապես առաջ պարտավոր է վերջինիս զգուշացնել:

Մատակարարը չպետք է դադարեցնի բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս ներկայացրել է մատակարարի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ կամ նրա հետ կազմել է պարտքի մարման ժամանակացույց: Եթե բնակիչ-բաժանորդը պարտքը չի մարում ըստ ժամանակացույցի, ապա մատակարարն իրավունք ունի դադարեցնել նրա գազամատակարարումը՝ վերը նշված կարգով նախազգուշացնելուց հետո:

• **Գազամատակարարման ընդհատումների թվի և ընդհատման տևողության սահմանափակումները՝** Կանոնների 2.8-րդ կետի համաձայն՝ մատակարարը պարտավոր է նվազագույնի հասցնել յուրաքանչյուր բաժանորդի գազամատակարարման ընդհատումների թիվը և ընդհատման տևողությունը, ընդ որում, ընդհատումների թիվը օրացույցային տարվա ընթացքում չպետք է գերազանցի 4 անգամը, իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը, բացառությամբ, եթե ընդհատումը ֆորս մաժորի հետևանք է: Ձմեռային ժամանակահատվածում (նոյեմբերի 1-ից մինչև մարտի 15-ը) բնակիչ-բաժանորդների գազամատակարարումը չպետք է ընդհատվի գազամատակարարման ցանցում պլանային աշխատանքներ կատարելու պատճառով: Նոր

բաժանորդների միացման պատճառով բաժանորդների գազամատակարարման ընդհատումները չեն ներառվում ընդհատումների հաշվառվող քանակի մեջ: Ջերմային էլեկտրակայանների և տեխնոլոգիական անընդհատ ցիկլ ունեցող բաժանորդների համար այդ ցուցանիշները կարող են սահմանվել Պայմանագրով՝ չգերազանցելով սույն կետում սահմանված արժեքները:

• **Գազամատակարարման համակարգում հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափումը՝** Կանոնների 4.7-րդ և 4.8-րդ կետերի համաձայն՝ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության վերաբերյալ կասկածի դեպքում իրականացվում է առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափում: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափումը կարող է իրականացվել ինչպես բաժանորդի պահանջով, այնպես էլ մատակարարի նախաձեռնությամբ: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման դեպքում մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցումից ոչ ուշ, քան 15 աշխատանքային օրվա ընթացքում բաժանորդին ներկայացնել չափագիտական մարմնի փորձագիտական եզրակացության պատճենը: Առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է մատակարարը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ չափագիտական մարմնի տված փորձագիտական եզրակացությամբ փաստվել է առևտրային հաշվառքի սարքի այնպիսի խախտում, որի դեպքում մատակարարված բնական գազի վերահաշվարկն իրականացվում է ԳՄՕԿ-ի 4.13 կետի համաձայն կամ բաժանորդի կողմից առևտրային հաշվառքի սարքի միջստուգաչափման ժամկետում մեկից ավելի անգամ առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության ստուգման վերաբերյալ դիմումի ներկայացման արդյունքում չափագիտական մարմնի տված փորձագիտական եզրակացությամբ չի հաստատվել առևտրային հաշվառքի սարքի խախտում: Նման դեպքերում առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափման հետ կապված բոլոր ծախսերը կրում է բաժանորդը:

• **Մատակարարի և բաժանորդի միջև ծագած վեճերի լուծումը՝** Կանոնների 2.19-րդ կետի համաձայն՝ վեճերը լուծվում են Պայմանագրով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

• **Կենցաղային սպառում ունեցող բաժանորդի գործողությունները գազասպառման համակարգում փոփոխություններ կատարելու դեպքում՝** Կանոնների 2.16-րդ կետի համաձայն՝ բնակիչ-բաժանորդները և բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպությունները գազօգտագործող սարքավորման փոխարինման կամ նոր սարքերի հավաքակցման կամ գազասպառման համակարգում այլ փոփոխություններ կատարելու համար գրավոր դիմում են մատակարարին՝ ներկայացնելով անհրաժեշտ տեղեկատվություն այդ փոփոխությունների մասին:

Մատակարարը պարտավոր է 15-օրյա ժամկետում քննարկել դիմումը, անհրաժեշտ փոփոխություններ կատարել գազասպառման համակարգի նախագծում կամ թույլատրել գազօգտագործող սարքավորման փոխարինումը: Դիմումը մերժելու դեպքում մատակարարը պարտավոր է դիմողին ներկայացնել գրավոր հիմնավորում: Գազասպառման համակարգում փոփոխությունները (նոր գազատարի կամ ծխատարի կառուցում, հաշվառքի սարքի վերահավաքակցում և այլն) կատարվում են նոր

գազասպառման համակարգի նախագծման, կառուցման և կարգաբերման համար սահմանված կարգով:

Առավել հետաքրքրություն ներկայացնող հիշյալ տեղեկությունների վերաբերյալ բազմաթիվ հարցումները վկայում են, որ ***ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը պետք է հեռևողական միջոցներ ձեռնարկի սպառողների և այլ շահառուների համար տեղեկատվության հասանելիության մակարդակի բարձրացման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում հեռուստատեսությամբ, համացանցով և զանգվածային լրատվության միջոցներով պարբերաբար հանդես գա ուսուցողական և պարզաբանողական տեսահոլովակներով, ուղերձներով և այլ մեկնաբանություններով***:

Վերը թվարկված երեք բնագավառներում էլ մատակարարի և բաժանորդի փոխադարձ իրավունքների և պարտականությունների հստակեցման տեսանկյունից խնդրահարույց է մնում հետևյալ հարցը.

Սահմանված կանոներում սպառիչ չեն կանոնակարգվում սեփականության իրավունքի (տարածքի) նկատմամբ իրավունքի դադարեցման դեպքում բաժանորդի և նոր, դեռևս բաժանորդ չհանդիսացող գնորդի փոխհարաբերությունները, ինչի արդյունքում հստակեցված չէ, թե ում պետք է փոխանցվեն նախկինի պարտավորությունները, մատակարարն ումից պետք է բռնագանձի մատուցված ծառայության դիմաց վճարները:

Դիտվում է նպատակահարմար Կանոններում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով ծագող իրավահարաբերությունները կարգավորել ՀՀ քաղաքացիական օրենգրքի 476-րդ հոդվածի («Երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք հանձնելու վաճառողի պարտականությունը») իրավակարգավորումների շրջանակում, այն է՝ վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք, բացառությամբ այն դեպքի, երբ գնորդը համաձայնվել է ընդունել երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված ապրանքը:

Սպառողների իրավունքների լիարժեք պաշտպանության ու շահերի հավասարակշռման համար բնական գազի մատակարարման համակարգի իրավակարգավորումներում նպատակահարմար են դիտվում ներքոհիշյալ փոփոխությունները.

- **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի «գ» կետով սահմանված է հետևյալը.**

«5. Լիցենզավորված անձինք իրավասու են բացահայտելու սույն հոդվածի 4-րդ կետում նշված տեղեկությունները՝

գ) եթե բացահայտումն անհրաժեշտ է ի պաշտպանություն լիցենզավորված անձի (ընթանում են վարույթներ ընդդեմ այդ լիցենզավորված անձի): **Սպառողը կարող է պահանջել, որ բացահայտումը կատարվի գաղտնիության կարգով՝ դռնփակ վարույթների միջոցով.»:**

Տվյալ դեպքում դռնփակ վարույթների միջոցով կատարվելու պահանջի վերաբերյալ սպառողի անձնական տվյալների գաղտնիության պահպանման իրավունքի պաշտպանությունը երաշխավորված կլինի, եթե ***նույն կետով լիցենզավորված անձի վրա***

դրվի պարտականություն՝ գաղտնիության բացահայտման մտադրության կամ նախաձեռնության մասին նախօրոք սպառողին տեղեկացնելու մասին:

• **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 3-րդ մասով սահմանված է. «3. Հանձնաժողովը կարող է սահմանել լիցենզավորված անձի գործունեության երկարաժամկետ սակագին:** Էներգետիկայի բնագավառում պետություն-մասնավոր գործընկերության շրջանակում կնքված գործարքի համաձայն՝ հանձնաժողովը տրամադրվող գործունեության լիցենզիայով կարող է սահմանել սակագնային երկարաժամկետ համաձայնագիր:»:

Սույն հոդվածի նշված մասի 2-րդ նախադասության հիմնավորված իրավակարգավորման պայմաններում, ***նույն մասի 1-ին նախադասությունն ավելորդ է թվում,*** քանի վերջինս որևէ հիմնավորում և պատճառաբանվածություն չի պարունակում հանձնաժողովի հայեցողական լիազորության իրականացման համար, ինչն ամենևին չի բխում սպառողների շահերից: Դրան հակառակ, նույն մասի 2-րդ նախադասությունով սահմանված է սակագնային երկարաժամկետ համաձայնագիր կնքելու պայմանը:

• **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված է.** «5. Սահմանված սակագինը կարող է վերանայվել **ինչպես լիցենզավորված անձի, այնպես էլ հանձնաժողովի նախաձեռնությամբ:**»:

Տվյալ դեպքում էներգետիկայի բնագավառում բոլոր շահերի հավասարակշռման անհրաժեշտությունից ելնելով, ***սակագնի վերանայման նախաձեռնության իրավունքը***, բացի լիցենզավորված անձից և հանձնաժողովից, ***պետք է վերապահել նաև սպառողների որոշակի խմբին,*** ենթադրենք, օրինակ՝ 50 սպառողի և այլն (սպառողների թվի նվազագույն և առավելագույն սահմանները ենթակա են վերլուծական քննարկման արդունքով որոշման):

• **«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ մասերով, ինչպես նաև 49-րդ հոդվածի 1-ին մասով համապատասխանաբար սահմանված է հետևյալը.**

«42-րդ հոդվածի 3-րդ, 6-րդ, 8-րդ, 11-րդ մասեր՝ Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող անձի կողմից, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված անձանց, սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված արարքը կատարելը, որի հետևանքով … այն ուղղակիորեն հանգեցրել է **մի խումբ սպառողների** իրավունքների կամ օրինական շահերի խախտման … առաջացնում է տուգանք … »:

«49-րդ հոդվածի 1-ին մաս՝ Լիցենզիա ունեցող անձինք հանձնաժողովի կողմից սահմանված կարգով մշակում են էլեկտրական, ջերմային էներգիայի և բնական գազի մատակարարման անխուսափելի սահմանափակումների հանգեցնող պայմաններում իրականացվելիք գործողությունների ծրագրեր, որոնք պետք է արտացոլեն նաև **որոշակի սպառողների** էներգամատակարարման առաջնահերթության պայմանները: Նման սպառողների ցանկը ամեն տարի՝ մինչև հոկտեմբերի 1-ը, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը …:»

Նկատի ունենալով, որ «մի խումբ սպառողներ», «որոշակի սպառողներ» և նմանատիպ եզրույթները խիստ գնահատողական և հայեցողական են, ***այդ եզրույթներն Օրենքի վերոհիշյալ, ինչպես նաև մնացած դրույթներում կարիք ունեն հստակեցման***:

• **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2005 թվականի հուլիսի 8-ի N 95-Ն որոշմամբ հաստատված «Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 2.8, 3.9 կետերով, 3.19 կետի «դ» և «ե» ենթակետերով, 4.14 կետի 1-ին նախադասությունով, 8.3 կետի 5-րդ նախադասությունով համապատասխանաբար սահմանված է հետևյալը.**

«2.8. Մատակարարը պարտավոր է նվազագույնի հասցնել յուրաքանչյուր բաժանորդի **գազամատակարարման ընդհատումների թիվը** և ընդհատման տևողությունը, ընդ որում, **ընդհատումների թիվը օրացուցային տարվա ընթացքում չպետք է գերազանցի 4 անգամը,** իսկ յուրաքանչյուր ընդհատման առավելագույն տևողությունը՝ 36 ժամը, բացառությամբ, եթե ընդհատումը ֆորս մաժորի հետևանք է:»:

«3.9 Վթարային-կարգավարական ծառայության հեռախոսահամարի մասին մատակարարը պարտավոր է **ոչ պակաս, քան տարին երկու անգամ տեղեկացնել զանգվածային լրատվամիջոցներով**:»:

«3.19. Գազասպառման համակարգի անվտանգության ապահովման համար՝

դ) մատակարարը պարտավոր է հրապարակել հուշաթերթիկներ և անվճար տրամադրել բաժանորդներին՝ գործընթացը կրկնելով **առնվազն երեք տարին մեկ անգամ.**

ե) մատակարարը պարտավոր է զանգվածային լրատվամիջոցներով **տարին առնվազն երկու անգամ** բաժանորդներին իրազեկել գազի անվտանգ օգտագործման կանոնների մասին:»:

«4.14. Առևտրային հաշվառքի սարքի խախտման դեպքում, երբ Չափագիտական մարմնի եզրակացությամբ փաստված առևտրային հաշվառքի սարքի խախտումը ըստ մատակարարի պայմանավորված է բաժանորդի միտումնավոր գործողություններով, և դա առևտրային հաշվառքի սարքի խախտման **առաջին դեպքն է վերջին երկու տարիների ընթացքում,** մատակարարն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարելու տույժ՝ վերահաշվարկված գազի արժեքի չափով:»:

«8.3 5) իր վեբ-կայքի միջոցով հնարավորություն ընձեռել բաժանորդին՝ անվճար, էլեկտրոնային եղանակով ծանոթանալ սույն կետի 3-րդ ենթակետում նշված տեղեկատվությանը՝ **առնվազն վերջին մեկ տարվա համար**:»:

Կանոններով հստակեցված չէ, թե **ինչ կարգով է ամրագրվում և հաշվառվում համապատասխանաբար՝**

- օրացուցային տարվա ընթացքում **«գազամատակարարման ընդհատումների քանակը»**,
- **«տարին երկու անգամ տեղեկացնելու»** հանգամանքը,
- **«երեք տարին մեկ անգամ»** հուշաթերթիկների հրապարակումը և անվճար տրամադրումը բաժանորդներին, ինչպես նաև **«տարին երկու անգամ»** բաժանորդներին իրազեկումը գազի անվտանգ օգտագործման կանոնների մասին, և, թե ինչ կարգով են այդ մասին տեղեկանում բաժանորդները,
- **«վերջին երկու տարիները»** և այդ ընթացքում **«առաջին դեպքը»,**
- **«առնվազն վերջին մեկ տարին»:**

Նշվածներն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 2.18 կետի 3-րդ նախադասությունով սահմանված է հետևյալը. «Բաժանորդի (օգտագործողի) տարածքում մատակարարի ներկայացուցիչները պարտավոր են պահպանել բաժանորդի ներքին կանոնակարգը:»:**

Այնինչ, բաժանորդի ներքին կանոնակարգ հաստատված չէ, որպիսի բացը ենթակա է վերացման:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.4 կետի 1-ին նախադասությունով, 5.5.5.1 ենթակետով, 10.16 կետով համապատասխանաբար սահմանված է հետևյալը.**

«4.4. Մատակարարը պարտավոր է առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման, հերթական կամ արտահերթ ստուգաչափման ժամկետների մասին ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ **գրավոր** (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակության միջոցներով) ծանուցել **բաժանորդին**:»:

«5.5.5.1. ԳՄՕԿ-ի 5.5 կետի «ե3» ենթակետում նշված դեպքում, նախքան գազամատակարարման դադարեցումը, մատակարարը պարտավոր է այդ մասին ոչ ուշ, քան 3 աշխատանքային օր առաջ **գրավոր** (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցել բաժանորդին:»:

«10.16 Սույն գլխում նշված բոլոր ծանուցումները, առաջարկություններն ու համաձայնեցումները մատակարարն իրականացնում է **գրավոր**:»:

Կանոններով հստակեցված չէ, թե ինչ կառուցակարգի կիրառմամբ պետք է դրսևորվի ու երաշխավորվի բաժանորդի **«գրավոր ձևով»** ծանուցված լինելը**:**

Նշվածներն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.4 կետի 2-րդ և 3-րդ նախադասություններով սահմանված է.** «Մատակարարն իրավունք ունի առևտրային հաշվառքի սարքը ապահավաքակցել առանց բաժանորդին նախապես ծանուցելու, եթե ակնհայտորեն հայտնաբերել է, որ բաժանորդը բնական գազը սպառում է առևտրային հաշվառքի սարքի խախտմամբ: Նման դեպքում մատակարարը առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցման մասին բաժանորդին պարտավոր է սույն կետում նշված եղանակներով **ծանուցել անմիջապես՝ առաջին իսկ հնարավորության դեպքում,** և ներկայացնել առևտրային հաշվառքի սարքի ակնհայտ խախտման իր հիմնավորումները:»:

«Անմիջապես՝ առաջին իսկ հնարավորության դեպքում ծանուցելու» հանգամաքը խիստ գնահատողական և հայեցողական է և Կանոններով սահմանված չէ, թե կոնկրետ ինչ ժամկետում պետք է տեղի ունենա այդ ծանուցումը,,

Նշվածն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում: Բացի այդ, անհրաժեշտ է Կանոններով սահմանել նաև, որ առևտրային հաշվառքի սարքի ակնհայտ խախտման իր հիմնավորումները մատակարարը բաժանորդին պետք է ներկայացնի գրավոր ձևով՝ միաժամանակ Կանոնների վերոհիշյալ և մնացած համապատասխան դրույթներով սահմանելով, թե

ինչ կառուցակարգի կիրառմամբ պետք է դրսևորվի ու երաշխավորվի բաժանորդի «գրավոր ձևով» ծանուցված լինելը:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.5 կետով սահմանված է հետևյալը.** «4.5. **Բաժանորդն իրավունք ունի պահանջել,** որ մատակարարն առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանք, ներառյալ՝ դրա ապահավաքակցումը կամ ստուգաչափումը, իրականացնի իր ներկայությամբ՝ նախապես փոխհամաձայնեցված ժամկետում, սակայն ոչ ուշ, քան մատակարարի կողմից այդ մասին **գրավոր** (այդ թվում՝ հեռախոսագրով կամ էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով) ծանուցելու պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում: Սույն կետում սահմանված ժամկետում առևտրային հաշվառքի սարքի ապահավաքակցմանը կամ ստուգաչափմանը պատշաճ ձևով տեղեկացված բաժանորդի չներկայանալու դեպքում այդ աշխատանքներն իրականացվում են **առանց բաժանորդի ներկայության**:»:

Առևտրային հաշվառքի սարքի հետ կապված որևէ աշխատանքի, ներառյալ՝ դրա ապահավաքակցմանը կամ ստուգաչափմանը բաժանորդի ներկա գտնվելու պահանջը, բացի բաժանորդի իրավունքից, պետք է հանդիսանա նաև մատակարարի պարտականությունը: ***Նշվածն անհրաժեշտ է սահմանել Կանոններով՝ միաժամանակ Կանոնների վերոհիշյալ և մնացած համապատասխան դրույթներով սահմանելով, թե ինչ կառուցակարգի կիրառմամբ պետք է դրսևորվի ու երաշխավորվվի բաժանորդի «գրավոր ձևով» ծանուցված լինելը: Բացի այդ, Կանոնների հիշյալ 4.5 կետի 2-րդ նախադասությունը կարելի է լրացնել հետևյալ բովանդակությամբ. «, սակայն, առնվազն 2 չշահագրգռված չափահաս անձի մասնակցությամբ:» բառերով:***

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 4.6 կետի «բ» ենթակետի 1-ին և 2-րդ նախադասություններով սահմանված է հետևյալը.**

«4.6. Մատակարարի կամ բաժանորդի սեփականությունը հանդիսացող առևտրային հաշվառքի սարքի փոխարինման կամ ստուգաչափման նպատակով դրա ապահավաքակցման դեպքում մատակարարը՝

բ) կազմում է առևտրային հաշվառքի սարքի ցուցմունքի, դրա ամբողջականության կամ վնասված լինելու մասին արձանագրություն (ակտ), որը ստորագրում են մատակարարը և բաժանորդը: Արձանագրության (ակտի) որևէ դրույթին բաժանորդի անհամաձայնության դեպքում այդ մասին արձանագրությունում (ակտում) կատարվում է համապատասխան նշում՝ նկարագրելով անհամաձայնության պատճառները:»:

Կանոնների համապատասխան դրույթը կարելի է լրացնել հետևյալ բովանդակությամբ. «Նույն կերպ արձանագրությունում (ակտում) կատարվում է համապատասխան նշում՝ բաժանորդի կողմից արձանագրությունը (ակտը) ստորագրելուց հրաժարվելու, ինչպես նաև դրա պատճառների մասին (այդպիսիք ներկայացվելու դեպքում):»:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 5.5 կետի «ե2» ենթակետով և 7.3 կետի «ե2» ենթակետով համապատասխան սահմանված է հետևյալը.**

«5.5. Մատակարարն իրավունք ունի ընդհատել, դադարեցնել կամ Պայմանագրով սահմանված կարգով սահմանափակել բաժանորդի գազամատակարարումը՝

ե2) ԳՄՕԿ-ի 5.4 կետով սահմանված կարգով կնքված գազօգտագործող սարքավորման գազի մուտքային գծի փականների կնիքը բաժանորդի կողմից առանց մատակարարին **պատշաճ ձևով տեղյակ պահելու** հանելու դեպքում,…»

«7.3. Մատակարարն իրավունք ունի ընդհատել կամ դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը՝

ե2) ԳՄՕԿ-ի 7.8 կետով սահմանված կարգով կնքված գազօգտագործող սարքավորման մուտքային գծի փականների կնիքը բաժանորդի կողմից առանց մատակարարին **պատշաճ ձևով տեղյակ պահելու** հանելու դեպքում,»:

Կանոններով սահմանված չէ, թե ինչ կառուցակարգերի կիրառմամբ պետք է բաժանորդը մատակարարին «պատշաճ ձևով տեղյակ պահի» սահմանված կարգով կնքված գազօգտագործող սարքավորման գազի մուտքային գծի փականների կնիքը հանելու մասին: Նշվածներն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 3.10 կետով, 4.7 կետի 1-ին նախադասությունով, 5.7.2, 5.7.4 ենթակետերով, 7.4 կետի 2-րդ նախադասությունով, 8.7 կետի 1-ին նախադասությունով համապատասխանաբար սահմանված է հետևյալը.**

«3.10. Գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում մարդկանց կյանքին, առողջությանը կամ շրջակա միջավայրին վտանգ սպառնացող իրավիճակներում բաժանորդը պարտավոր է անմիջապես ընդհատել գազի սպառումը և այդ մասին անհապաղ տեղեկացնել մատակարարին: Մատակարարը պարտավոր է ահազանգն ստանալուց հետո **հնարավոր կարճ ժամկետում** դադարեցնել բաժանորդի գազամատակարարումը: Բնակչի կամ բազմաբնակարան շենքում գտնվող կազմակերպության գազասպառման համակարգի վթարի կամ վթարային իրավիճակների դեպքում գազամատակարարման դադարեցումից հետո մատակարարը պետք է միջոցներ ձեռնարկի գազասպառման համակարգի վերականգնման համար՝ համաձայն սպասարկման համաձայնագրի:»:

«4.7. Առևտրային հաշվառքի սարքի աշխատանքի ճշտության վերաբերյալ **կասկածի դեպքում** իրականացվում է առևտրային հաշվառքի սարքի արտահերթ ստուգաչափում:»:

«5.7.2. ԳՄՕԿ-ի 5.7 կետի բ) ենթակետում նշված դեպքում գազամատակարարման դադարեցումը կատարվում է բաժանորդի առաջադրած **խելամիտ ժամկետում**:»:

«5.7.4. ԳՄՕԿ-ի 5.7 կետի գ) ենթակետում նշված դեպքերում գազամատակարարման դադարեցումը կատարվում է կարգագրով սահմանված ժամկետում՝ գազամատակարարման դադարեցումից **անմիջապես առաջ** նախազգուշացնելով բաժանորդին:»:

«6.8 … Բաժանորդը պետք է **ողջամտորեն հիմնավորի** իր կողմից սպառված բնական գազի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին:»:

«7.4 … Մատակարարը պարտավոր է **հնարավորինս սեղմ ժամկետում** տեղեկացնել բաժանորդին գազամատակարարման ընդհատման պատճառների և վերականգնման ժամանակի մասին:»:

«8.7. Մատակարարը չպետք է դադարեցնի բնակիչ-բաժանորդի գազամատակարարումը, եթե վերջինս ներկայացրել է **մատակարարի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ** կամ նրա հետ կազմել է պարտքի մարման ժամանակացույց:»:

«8.8 … Բաժանորդը պետք է **ողջամտորեն հիմնավորի** իր կողմից սպառված բնական գազի վիճարկվող մասի արժեքը՝ հիմնավորումները գրավոր ներկայացնելով մատակարարին:»:

Նկատի ունենալով, որ **«հնարավոր կարճ ժամկետում», «կասկածի դեպքում», «խելամիտ ժամկետում», «անմիջապես առաջ», «ողջամտորեն հիմնավորի», «հնարավորինս սեղմ ժամկետում», «մատակարարի համար ընդունելի պայմաններով վճարման երաշխիքներ», «ողջամտորեն հիմնավորի»** և նմանատիպ եզրույթները խիստ գնահատողական և հայեցողական են, ***դրանք Կանոնների վերոհիշյալ, ինչպես նաև մնացած դրույթներում կարիք ունեն հստակեցման, իսկ ժամկետեր նշված լինելու դեպքում՝ նաև սահմանվեն այդ ժամկետների առավելագույն և նվազագույն սահմանները***:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 10.15 կետով սահմանված է.** «10.15 Հանձնաժողովը, բաժանորդի և մատակարարի շահերի հավասարակշռման նպատակով, ինչպես նաև, ելնելով նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման համար անհրաժեշտ աշխատանքների ծավալներից, **մատակարարի կամ դիմող անձի դիմումի հիման վրա առանձին դեպքերում կարող է ընդունել նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման անհատական որոշումներ**:»:

Խիստ սուբյեկտիվ է «**մատակարարի կամ դիմող անձի դիմումի հիման վրա առանձին դեպքերում կարող է ընդունել նոր գազասպառման համակարգը գազամատակարարման ցանցին միացման անհատական որոշումներ»** կայացնելու հանգամանքը, ինչը կարող է տարաբնույթ մեկնաբանությունների և կոռուպցիոն ռիսկերի տեղիք տալ:

Նշվածն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 10.1.3 կետով սահմանված է.** «10.1.3 Տեխնիկական պայմանների **գործողության ժամկետը սահմանվում է մեկ տարի,** եթե դրանցում այլ ժամկետ նախատեսված չէ:»:

Կանոններում սահմանված չէ և անհասկանալի է, թե **ո՞ր պահից է սկսում հաշվարկվել** տեխնիկական պայմանների գործողության ժամկետը՝ այդ պայմանները ստորագրելու՞, թե՞ դրանք սպառողին տրամադրելու կամ դրա մասին իրազեկելու պահերից:

Նշվածն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 10.1.4 կետի 3-րդ նախադասությունով, 10.2.1 կետի 3-րդ նախադասությունով սահմանված է.** «Դիմող անձի պատվերով կառուցված գազատարի և գազամատակարարման ցանցի ներմիացման

աշխատանքները պետք է կատարվեն մատակարարի **վերահսկողությամբ և մասնակցությամբ**:»:

Կանոններով սահմանված չէ, թե ինչ կառուցակարգերի կիրառմամբ պետք է մատակարարի կողմից իրականացվի **«վերահսկողությունը»** կառուցված գազատարի և գազամատակարարման ցանցի ներմիացման աշխատանքների նկատմամբ, ինչպես նաև ապահովվի նույն աշխատանքներին մատակարարի **«մասնակցությունը»**:

Նշվածն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում:

• **«Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնների» 12.1.3 կետով սահմանված է.** «12.1.3 Մատակարարը բաժանորդի **դիմումին** պարտավոր է պատասխանել այն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում, եթե սույն կանոններով առանձին դեպքերի համար այլ ժամկետ սահմանված չէ:»:

Կանոններում սահմանված չէ, **թե ինչ ձևով (գրավոր, բանավոր, հեռախոսազանգի միջոցով)** ներկայացված դիմումն է մատակարարը պարտավոր պատասխանել այն ստանալու պահից 10 աշխատանքային օրվա ընթացքում:

Նշվածն անհրաժեշտ է հստակեցնել Կանոնների վերոհիշյալ և մնացած բոլոր համապատասխան դրույթներում:

Վերոհիշյալ առաջարկություններում նշված փոփոխություններն ու լրացումները կատարելով հանդերձ, անհրաժեշտ կլինի համապատասխան լրամշակումներ կատարել նաև բնական գազի մատակարարման (մատակարար-բաժանորդ (բնակիչ)) պայմանագրի օրինակելի ձևերում:

Նպատակահարմար է դիտվում նաև Կանոններով սահմանել (հաստատել) չափագիտական հիմնարկի կողմից առևտրային հաշվառքի սարքերի փորձաքննության անցկացման կարգն ու պայմանները՝ ապահովելով ու երաշխավորելով այդ գործընթացին ի սկզբանե՝ բաժանորդի անմիջական մասնակցության իրավակազմակերպական կառուցակարգերը, այդ թվում՝ սարքի կապարակնիքի քանդումը և սարքի բացումը միայն բաժանորդի ներկայությամբ իրականացվելու ապահովումը և այլն:

Նկատի ունենալով, որ սպառողների իրավունքների պաշտպանության հետ փոխկապակցված նույնանման անկատարություններ, թերություններ և բացթողումներ առկա են նաև ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոններում» և 2016 թվականի նոյեմբերի 30-ի N 378-Ն որոշմամբ հաստատված «Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոններում», նպատակահարմար է նշված իրավական ակտերում ևս կատարել համահունչ փոփոխություններ և լրացումներ: